


ԻՆՉԱԵՍ ԼՈՒՍԱԲԱՆԵԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԸ

**Ուղեցույց
լրագրողների համար**

Երևան 2012



Ուղեցույցում հանգամանորեն անդրադարձ է կատարվում քրեական հետապնդում հարուցելու բացարձիկ լիազորություն ունեցող ՀՀ դատախազության, ինչպես նաև քրեական գործերով նախաքննություն կատարելու իրավասություն ունեցող մարմինների (ՀՀ ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, ՀՀ հատուկ քննչական ծառայության, պաշտպանության նախարարության պետական եկամուտների կոմիտեի քննչական ծառայությունների) քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում տեղեկատվության տնօրինման առանձնահատկություններին:



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ



Ուղեցույցը պատրաստվել և հրատարակվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» թվ-ի կողմից իրականացվող «Տեղեկատվության ազատությունը որպես հանայնքային նասնակցության միջոց» ծրագրի շրջանակում, Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության տրամադրած աջակցությամբ:

Ուղեցույցը արտահայտված տեսակետները հեղինակային են և չեն արտահայտում ԱՍՍ Միջազգային զարգացման գործակալության տեսակետը:

Բովանդակություն

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Տեղեկատվության ազատության իրավունքը 4

1.1 ՏԱ հասկացությունը և նշանակությունը 4

1.2 ՏԱ օրենսդրությունը 5

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Քրեական հետապնդում և նախաքննություն իրականացնող մարմինները և դրանց գործունեության հրապարակայնությունը 16

2.1 Քրեական հետապնդում հարուցող և իրականացնող մարմինները 16

2.2 Քրեական հետապնդման մարմինների գործունեության հրապարակայնությունը 25

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

Քրեական գործերի վերաբերյալ տեղեկատվության տնօրինման առանձնահատկությունները 32

3.1 Քրեական գործերի հարուցումը և քրեական գործերի ենթակայությունը 32

3.2 Դատավարական գործողությունների արձանագրումը և քրեական գործի նյութերը 33

3.3 Քրեական գործերի նյութերին ծանոթանալը 40

3.4 Քրեական գործերով տեղեկատվության սահմանափակումները: Նախաքննության գաղտնիքը 46

3.4 Դատական ակտերի և դատական գործի նյութերի մատչելիությունը 32

ՀԱՎԵԼՎԱԾ 60

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Տեղեկատվության ազատության իրավունքը

1.1. ՏԱ ԻԽԱԿԱԳՈՒԹՅՈՒՆԸ և ԱՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

 Տեղեկություն ստանալու իրավունքը մարդու իշխանարար իրավունքներից է և պատկանում է քաղաքացիական և քաղաքական իրավունքների թվին:

Իրագեկ և ակտիվ քաղաքացիական հասարակության ծևավորնան, իշխանության գործունեության վերահսկողության, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի լավագույն և արդյունավետ միջոցը տեղեկատվության ազատությունն է: Եվրոպայի խորհրդի 2009թ.-ին ընդունված «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիայում նշվում է, որ պաշտոնական փաստաթղթերի («պաշտոնական փաստաթղթեր») նշանակում է որևէ ձևով գրանցված, մշակված կամ ստացված և պետական մարմինների կողմից պահպող ամբողջ տեղեկատվությունը) մատչելիության իրավունքի գործադրումը՝

1. հանրության համար տեղեկատվության աղյուր է,
2. օգնում է հանրությանը կարծիք կազմել հասարակության վիճակի և պետական մարմինների վերաբերյալ,
3. նպաստում է պետական մարմինների, կարողություններին, արդյունավետությանը և պատասխանատվությանը՝ դրանով իսկ օգնելով նրանց լեգիտիմության հաստատմանը:

Տեղեկատվության ազատության օրենսդրությունը կարող է վերահսկողության ժիշտ մեխանիզմ սահմանել: Այն կարող է նաև ծևավորել պրակտիկա բոլորի համար, նույնիսկ նրանց, ովքեր քիչ են հակված հետևել դրան: Կարող է շրջադարձել սովորական դարձած գաղտնիության կամխավարկածը: Սա նաև ավարագես վերաբերում է նաև իրավապահ մարմիններին, որոնց տրամադրության տակ գտնվող տեղեկատվությունը սովորաբար ավելի շատ է հավակնում լինել սահմանափակման ենթակա, միևնույն ժամանակ ունենում է ավելի մեծ հանրային նշանակություն:

Բացի այդ, տեղեկատվության ազատությունը դիտարկվում է որպես կոռուպցիայի դեմ պայքարի լավագույն միջոց: ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայում նշվում է, որ իշխանությունները պետք է միջոցներ ձեռնարկեն տեղեկատվության մատչելիությունը երաշխավորելու համար: Տեղեկատվության ազատության իրավունքի այս նշանակությունն էլ ավելի մեծ կարևորություն է ծեղզ բերում իրավապահ մարմինների համակարգի հետ առնչվելիս: Իրավապահ մարմիններն են հասարակության անվտանգության, հասարակական կարգի ապահովման երաշխիքը, նրանց է վերապահված այնպիսի կարևոր գործառույթ, ինչպիսին է քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը, նրանց անվտանգության պաշտպանությունը հանցագործություններից, դրանց բացահայտումը, ուստի, իրավապահ մարմիններն անմիջական կապ ունեն հասարակության բարոյական առողջության հետ: Հետևաբար, իրավապահ մարմիններում կոռուպցիայի դեմ պայքարում և իրավապահ մարմինների գործունեության բափանցիկության ապահովման ոլորտում տեղեկատվության ազատության նշանակությունը կրկնապատկվում է:

Վերջապես, իրավարակային և բափանցիկ գործելածն ուղղակիորեն նպաստում է պետություն-հասարակություն կապի ամրապնդմանը: Հաշվի առնելով իրավապահ մարմինների գործունեության կարևորությունը և առնչությունը հասարակության հետ՝ տեղեկատվության ազատությունը կարող է լինել այն մեխանիզմը, որի կիրառումը իրավապահ մարմինների կողմից կավելացնի այդ մարմինների նկատմամբ հասարակության վստահությունը, ինչն էլ իր հերթին կարող է նպաստել իրավապահ մարմինների աշխատանքին և հանցագործությունների բացահայտմանը:

1.2. ՏԱ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Միջազգային իրավական ակտեր

Տեղեկատվության ազատության օրենսդրությունը կարող է վերահսկողության ժիշտ մեխանիզմ սահմանել: Այն կարող է նաև ծևավորել պրակտիկա բոլորի համար, նույնիսկ նրանց, ովքեր քիչ են հակված հետևել դրան: Կարող է շրջադարձել սովորական դարձած գաղտնիության կամխավարկածը: Սա նաև ավարագես վերաբերում է նաև իրավապահ մարմիններին, որոնց տրամադրության տակ գտնվող տեղեկատվությունը սովորաբար ավելի շատ է հավակնում լինել սահմանափակման ենթակա, միևնույն ժամանակ ունենում է ավելի մեծ հանրային նշանակություն:

Տեղեկություն փնտրելու և ստանալու իրավունքը հօչակվում է Մարդու իրա-

Վունքների համընդիանուր Հոչակագրի 19-րդ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի 10-րդ, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագրի 19-րդ հոդվածներով, Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով:

- Որպես ՄԱԿ-ի անդամ (1992 թ.-ից)՝ Հայաստանը միացել է «Մարդու իրավունքների համընդիանուր հօչակագրին», որի Հոդված 19-ում հօչակագում է. «Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքներ ունենալու և արտահայտվելու իրավունք. այս իրավունքը ներառում է համոզմունքներին անարգել հավատարիմ մնալու և տեղեկություններ ու գաղափարներ որոնելու, ստանալու ու տարածելու ազատություն, լրատվության ցանկացած միջոցներով, անկախ պետական սահմաններից»:
- 2002 թ.-ին Հայաստանը որպես Եվրոպայի խորհրդի անդամ, վավերացրել է «Մարդու իրավունքների մասին» Եվրոպական կոնվենցիան, որի 10-րդ հոդվածը պաշտպանում է արտահայտվելու և տեղեկատվության ազատությունը: Մարդու իրավունքների և իիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջանտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ծեռնարկությունների լիցենզավորումը»:

Կոնվենցիան նախատեսում է նաև բույլատորելի սահմանափակումներ, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային աճբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կամ հանդեսնելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաշառությունը պահպանելու համար:

- Հայաստանը վավերացրել է նաև «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը (ուժի մեջ է մտել 1993 թ.-ից), որի 19-չդ հոդվածում խոսվում է կարծիք ունենալու իրավունքի և անկախ պետական սահմաններից, ցանկացած տեսակի տեղեկություն-

ներ և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատության մասին:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոնխտեն 2011թ.-ին մշակել է «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր 19-րդ հոդվածի մեկնարաննան ուղեցույց: Անդրադառնալով տեղեկատվություն տնօրինողներին, տեղեկության հակացության՝ ուղեցույցը ներառել է նաև դրույթներ հանրային նշանակություն ունեցող պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ: Մասնավորապես, ուղեցույցում նշված է, որ տեղեկատվության ազատության իրավունքի իրականացման համար դաշնագիր մասնակից պետությունները պետք է ակտիվորեն հրապարակայնացնեն հանրային նշանակություն ունեցող պաշտոնական տեղեկությունները, ապահովեն այդպիսի տեղեկատվության հեշտ, արագ, արդյունավետ և պրակտիկ հասանելիությունը: Համաձայն ուղեցույցի՝ մասնակից պետությունները պետք է նաև համապատասխան միջոցներ ձեռնարկեն, որոնց դեպքում կապահովվի տեղեկության մատչելիությունը և տեղեկություններ փնտրելու և ստանալու հնարավորությունը: Այդպիսի միջոց է, օրինակ, տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենսդրությունը: Ուղեցույցն արձանագրում է, որ պետք է ժամանակին ընթացք տրվեն տեղեկություն ստանալու հարցումներին՝ դաշնագրով սահմանված կանոններին համապատասխան: Անդրադառն է կատարվել նաև տեղեկության տրամադրման համար վճարներին՝ սահմանելով, որ դրանք չպետք է այնպիսին լինեն, որ տեղեկության տրամադրման արգելք դառնան: Մասնակից պետությունները պետք է պահպանեն, որ տեղեկության տրամադրումը մերժվի միայն հիմնավոր պատճառներով, ինչպես նաև ստեղծվեն բողոքարկման մեխանիզմներ տեղեկության տրամադրումը մերժելու կամ տեղեկություն ստանալու հարցումներին չպատասխանելու դեպքում:

- **Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին կոնվենցիա**

2009թ.-ի հունիսի 18-ին Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված այս փաստաթղթը սահմանում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման, ինչպես նաև հանրային նշանակության մարմինների պաշտոնական փաստաթղթերի մատչելիությունը և կարգավորում է դրա հետ կապված ընդհանուր իրավահարաբերությունները: Համաձայն կոնվենցիայի նախարանի՝ կոնվենցիան ընդունվել է հաշվի առնելով պետական մարմինների թափանցիկության կարևորությունը բազմակարծ և ժողովրդավարական հասարակությունում, ինչպես նաև այն, որ «պաշտոնական փաստաթղթերի հասանելիության իրավունքի գործադրումը հանրության համար տեղեկատվության աղբյուր է, օգնում է հանրությանը կարծիք կազմել հասարակության

վիճակի և պետական մարմինների վերաբերյալ, նպաստում է պետական մարմինների ազնվությանը, կարողություններին, արդյունավետությանը և պատասխանատվությանը՝ դրանով իսկ օգնելով նրանց լեզիտիմության հաստատմանը:

● ԵԽ Հանձնարարականներ

Տեղեկատվության ազատության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի ընդունած փաստաթերի մի մասն անդրադառնում է տեղեկատվության ազատության իրավունքի իրականացմանը այնպիսի կարևոր ոլորտում, ինչպիսին քրեական գործերի վարույթն է: ԵԽ իրավական ակտերն անդրադառնում են ինչպես ուղղակիորեն քրեական վարույթի հետ կապված տեղեկատվության տրամադրման առանձնահատկություններին, այնպես էլ ճգնաժամի դեպքում, լրագրողական հետաքրննությունների դեպքում, և ահաբեկչության դեմ պայքարի ոլորտում տեղեկատվության տրամադրման առանձնահատկություններին:

● «Ճգնաժամի դեպքում արտահայտվելու ազատության և տեղեկատվության ազատության պաշտպանության վերաբերյալ» ԵԽ նախարարների կոմիտեի Ուղեցույց (ընդունվել է 2007թ.-ի սեպտեմբերի 26-ին):

«Ճգնաժամի ժամանակ արտահայտվելու ազատության և տեղեկատվության ազատության վերաբերյալ» ԵԽ նախարարների կոմիտեի Ուղեցույցը անդրադարձել է ճգնաժամայի իրավիճակներում լրատվական մասնագետների աշխատանքային պայմաններին՝ պարտավորեցնելով անդամ պետություններին ճգնաժամային իրավիճակներում լրագրողի համար ապահովել անձնական անվտանգություն, ազատ տեղաշարժվելու և տեղեկատվության ազատության իրավունքների իրականացում:

Ուղեցույցը նաև երաշխիքներ է սահմանում, որպեսզի ճգնաժամի ժամանակ անհարկի չսահմանափակվեն խոսքի և տեղեկատվության ազատության իրավունքները, ինչպես նաև սահմանում է, որ պետական մարմինները, լրատվական ժամանակի ընթացքում պետք է գտնեն ապահովել խոսքի և տեղեկատվության ազատության պաշտպանությունը ճգնաժամի պայմաններում:

● «Ահաբեկչության դեմ պայքար ԶԼՍ-ներում խոսքի և տեղեկատվության ազատության վերաբերյալ» Հոչակագիր (ընդունվել է 2005թ.-ի մարտի 2-ին):

Հոչակագիրն անդրադառնում է տեղեկատվության ազատությանը. մասնավորապես, պետական իշխանություններին կոչ անելով զանգվածային

լրատվամիջոցներին տրամադրել համապատասխան տեղեկատվություն, չսահմանել մասնություն խոսքի և տեղեկատվության ազատության նոր սահմանափակումներ, բացառությամբ, եթե դրանք խիստ անհրաժեշտ և համաշխափ են ժողովրդավարական հասարակությունում և գործող օրենքները և այլ միջոցառումները բավարար չեն: Հոչակագիրը նաև նշում է, որ լրագրողներին պետք է մատչելի լինի մշտապես թարմացվող տեղեկատվություն, ինչը պետական մարմինները պետք է ապահովեն խոսնակներ նշանակելու և մանուլի ասուլիսներ կազմակերպելու միջոցով:

Սակայն, երաշխիքների հետ մեկտեղ Հոչակագիրը սահմանում է նաև որոշակի սահմանափակումներ՝ կապված անմեղության կանխավարկածի, անձնական կյանքի անձեռնմխելության, այլոց իրավունքների պաշտպանության հետ:

● «Նետարանական լրագրության պաշտպանության և խթանման վերաբերյալ» ԵԽ Հոչակագիր (ընդունվել է 2007թ.-ի սեպտեմբերի 26-ին):

Հոչակագիրը կոչ է անում անդամ երկրներին պաշտպանել և խթանել հետաքրնական լրագրությունը, այդ թվում՝ ապահովելով լրագրողների՝ տեղեկատվության ազատության իրավունքը:

Մասնավորապես, Հոչակագիրը կոչ է անում անդամ պետություններին «ապահովել լրագրողների ազատ տեղաշարժի իրավունքը և նրանց տեղեկատվության ազատության իրավունքը՝ Եվրախորհրդի չափանիշներին համապատասխան»:

Հոչակագիրը, հաշվի առնելով լրագրողական գործունեության, մասնավորապես՝ հետաքրնական լրագրության վրա վնասակար ազդեցույցը, կոչ է անում անդամ պետություններին մեղմացնող գործողություններ իրականացնել, երբ հասարակական անվտանգությունը պաշտպանելու և ահաբեկչության դեմ պայքարելու պատրվակով առկա է արտահայտվելու և տեղեկատվության ազատության իրավունքը սահմանափակումների մակարդակությամբ:

● «Զանգվածային լրատվամիջոցներով քրեական վարույթի հետ կապված տեղեկատվության տրամադրման վերաբերյալ» Հոչակագիր (ընդունվել է 2003թ.-ի հուլիսի 10-ին):

Եվրոպայի խորհրդի «Զանգվածային լրատվամիջոցներով քրեական վարույթի հետ կապված տեղեկատվության տրամադրման վերաբերյալ» Հոչակագիրը կոչ է անում ԵԽ անդամ պետություններին խրախուսել լրատվամիջոցներում քրեական գործերի վերաբերյալ պատասխանատու հրապարա-

կումները օրենքի և դատական վարույթի վերաբերյալ լրագրողների ուսուցումներին աջակցելու միջոցով, լրատվամիջոցների, մասնագիտացված կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների և դատարանների համագործակցությունը ապահովելու միջոցով: Ես-ո նաև կոչ է անում անդամ պետություններին աջակցել այն նախաձեռնություններին, որոնցով լրատվամիջոցները սահմանում են մասնագիտական էթիկայի չափանիշներ, որոնք կարտացոլեն նաև ԶԼՍ-ների հրապարակումներում քրեական վարույթների նկատմամբ հարգանք ապահովելու սկզբունքները: Յոչակագիր համաձայն՝ անհրաժեշտ է ստեղծել համագործակցության ռեալ մեխանիզմներ լրատվության ոլորտի ինքնակարգավորվող մարմինների հետ, և լրատվության ոլորտի մասնագիտական միավորումներին ներգրավել ԶԼՍ-ներով քրեական վարույթի հետ կապված տեղեկատվության տրամադրման վերաբերյալ օրեսդրական գործնթացների մեջ:

Յոչակագիրն անդրադառնում է նաև լրատվամիջոցներին և լրագրողներին՝ կոչ անելով ստեղծել մասնագիտական էթիկական նորմեր և ուղեցույցեր, մասնավորապես՝ քրեական գործերի լուսաբանման վերաբերյալ, հրապարակումներում պահպանել ամենության կանխավարկածը՝ կասկածյալին և մեղադրյալին վերաբերվել որպես անմեղի, քանի դեռ մեղավորությունը չի հաստատվել դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով, հարգել քրեական գործի մասնակիցների, ինչպես նաև նրանց ընտանիքների՝ գաղտնի մնալու (անձնական լյանքի անձեռնմխելության) իրավունքը, լինել զգայուն քրեական գործում մասնակցող անչափահասների և այլ խոցելի խմբերի շահերի նկատմամբ և այլն:

- «Զանգվածային լրատվամիջոցներով քրեական վարույթի հետ կապված տեղեկատվության տրամադրման վերաբերյալ» R (2003) 13 Հանձնարարական (ընդունվել է 2003թ.-ի հուլիսի 10-ին):

«Զանգվածային լրատվամիջոցներով քրեական վարույթի հետ կապված տեղեկատվության տրամադրման վերաբերյալ» R (2003) 13 Հանձնարարականվ են նախարարների կոմիտեն սահմանել զանգվածային լրատվամիջոցներով քրեական վարույթի լուսաբանման սկզբունքները: Հանձնարարականը նշում է, որ որ հասարակությունը լրատվամիջոցներով պետք է կարողանալ տեղեկություններ դատական իշխանության և ոստիկանական գործունեության մասին: Ուստի, լրագրողները պետք է կարողանան ազատորեն լուսաբանել քրեական արդարադատության համակարգի (իրավապահ մարմինների, դատարանի) գործունեությունը, որը ենթակա է սահմանափակումների միայն Հանձնարարականվ նախատեսված սկզբունքների պահպանման համար: Ըստ Հանձնարարականի՝ այդ սկզբունքներն են.

1. **Ամենության կանխավարկածը** - անմեղության կանխավարկածի սկզբունքը հարգելը և պահպաննելը արդար դատավարության անբաժանելի մասն է: Ուստի, քրեական վարույթի վերաբերյալ տեղեկատվությունը և կարծիքները լրատվամիջոցները պետք է տարածեն միայն այն դիպում, երբ դա չի խոչընդոտում կասկածյալի կամ մեղադրյալի անմեղության կանխավարկածին:
2. **Դադորդվող տեղեկությունների ճշգրտությունը** - դատական մարմինները և ոստիկանությունը պետք է պահպանի ԶԼՍ-ները ստանան միայն հավաստի տեղեկություններ կամ տեղեկատվություն, որը հիմնված է ողջամիտ ենթադրությունների վրա:
3. **Տեղեկատվության մատչելիություն** - երբ առկա է քրեական վարույթի վերաբերյալ օրենքով չափելված տեղեկատվություն, դատական մարմինները և ոստիկանությունը պետք է մատչելի դարձնեն այդ տեղեկատվությունը բոլոր լրագրողների համար՝ առանց խտրականության:
4. **ԶԼՍ-ներին տեղեկատվություն տրամադրելու ձևերը** - երբ դատական մարմինները և ոստիկանությունը տեղեկատվություն են տրամադրում քրեական վարույթի վերաբերյալ, այդ տեղեկատվությունը պետք է տրամադրվի ոչ խտրական հիմունքներով՝ մանուկի հաղորդագրությունների, մանուկի ասուլիսների, լիազորված աշխատակիցների կամ ննանատիպ այլ միջոցներով:
5. **Քրեական վարույթի ընթացքում տեղեկատվության պարբերաբար տրամադրում** - այն դեպքերում, երբ քրեական գործում առկա է հանրային շահ կամ քրեական գործը հասարակության ուշադրության կենտրոնում է, դատական մարմինները և ոստիկանությունը պետք է տեղեկացնեն լրատվամիջոցներին տվյալ քրեական գործով իրենց հիմնական գործողությունների վերաբերյալ՝ պահպանելով նախաքննության գաղտնիությունը: Այն դեպքերում, երբ քրեական գործի վարույթը երկար ժամանակ է շարունակվում, գործի վերաբերյալ տեղեկությունը պետք է տրամադրվի պարբերաբար:
6. **Տեղեկատվության շահագործման արգելքը** - դատական մարմինները և ոստիկանությունը չպետք է շահագործեն քրեական գործի վերաբերյալ տեղեկությունները առևտրային կամ այլ նպատակով, եթե դա սահմանված չէ օրենքով:
7. **Անձնական կյանքի գաղտնիության իրավունքի պաշտպանությունը** - կասկածյալի, մեղադրյալի կամ քրեական վարույթի այլ մասնակիցների վերաբերյալ տեղեկություն հրապարակելիս պետք է հարգել այդ ան-

ձանց անձնական կյանքի իրավունքը, առանձնապես, եթե խոսքը գնում է անչափահասների կամ այլ խոցելի անձանց մասին, ինչպես նաև զոհերին, վկաների և նրանց ընտանիքների մասին:

8. **Ներքման և պատասխանի իրավունք** - լրատվամիջոցի կողմից քրեական վարույթի վերաբերյալ տեղեկության տարածման դեպքում հրապարակման յուրաքանչյուր սուբյեկտ պետք է իրավունքն ունենա հերքելու կամ շտկելու իր մասին հրապարակման մեջ տեղ գտած սխալ կամ զրպարտիչ տեղեկությունը: Այս իրավունքը պետք է իրագործելի լինի նաև դատական մարմինների և ոստիկանության տարածած հաղորդագրություններում սխալ տեղեկատվության դեպքում:
9. **Վնասակար ազդեցության կանխարգելում** - քրեական գործի համատեքստում դատական մարմինները և ոստիկանությունը պետք է ծերնապահ մնան այնպիսի տեղեկատվություն հրապարակելուց, որը էական վնաս կարող է հասցնել արդար դատավարության իրականացմանը:
10. **Մինչդատական վարույթի վնասակար հրապարակայնություն** - եթե մեղադրյալը ցույց է տալիս, որ մինչդատական վարույթում որևէ տեղեկության տրամադրումը (հրապարակումը) խախտում է կամ կարող է խախտել արդար դատավարության իր իրավունքը, ապա նա պետք է ունենա արդյունավետ իրավական պաշտպանության միջոց այդ տեղեկության հրապարակումը կանխելու համար:
11. **Լրագրողների համար հասանելիություն (ազատ մուտքի բույլտվություն)**- լրագրողները պետք է դրմաց դատական նիստերին և վճիռների հրապարակմանը ներկա գտնվելու հնարավորություն ունենան, առանց խորականության և առանց նախնական հավատարմագրման պահանջների: Լրագրողներին չպետք է արգելել ներկա գտնվել դատական նիստերին՝ բացառությամբ դատական նիստերի:
12. **Դատական դահլիճի հասանելիությունը լրագրողների համար** - իրավասու մարմինները, եթե դա ակնհայտորեն անհրագործելի չէ, պետք է դատարանի դահլիճում համապատասխան բավարար տեղեր հատկացնեն լրագրողներին՝ որպես այդպիսին առանց բացառելու հասարակության ներկայությունը:
13. **Դադուրդումներ դատական դահլիճից և ծայնագրում** - դատական դահլիճից հաղորդումները կամ ծայնագրումը պետք է հնարավոր լինի միայն այն դեպքում, եթե դա բույլատրված է օրենքով կամ դատարանի կողմից: Նման հաղորդումները պետք է բույլատրվեն միայն այն դեպքում, եթե բացակայում է վտանգը, որ այդ հաղորդումներն անհարկի ազդեցություն

կգործեն քրեական վարույթի մասնակիցների (վկաների, տուժողի, վարույթի այլ կողմերի) վրա:

14. **Ազակցություն լրատվամիջոցների գործունեությանը** - կայանալիք դատական նիստերի մասին տեղեկությունները, նիստին ներկա գտնվելու համար անհրաժեշտ այլ պահանջների վերաբերյալ տեղեկությունները պետք է մատչելի լինեն լրագրողների համար և սահմանված ժամկետում հրապարակվեն իրավասու մարմինների կողմից: Լրագրողներին առանց խորականության պետք է բույլատրվի կատարել կամ ստանալ հրապարակայնորեն ներկայացված վճիռների պատճենները: Նրանք պետք է հնարավորություն ունենան տարածելու այդ վճիռները հաճրության համար:
15. **Վկաների պաշտպանություն** - վկաների ինքնությունը կարելի է բացահայտել միայն վկայի համաձայնությամբ կամ եթե դա բխում է հանրային շահից կամ վկայի ցուցմունքն արդեն հրապարակվել է: Վկայի ինքնությունը չպետք է բացահայտվի, եթե դա սպառնում է նրա կյանքին կամ անվտանգությանը:
16. **Դատավճռի կատարման վերաբերյալ լրատվամիջոցների լուսաբանումը** - լրագրողներին պետք է բույլատրվի կապ պահել ազատագրկվածի հետ, բացառությամբ եթե դա խոչընդոտում է արդարադատության իրականացմանը կամ կարող է խախտել ազատագրկվածի, իրավապահ մարմինների ներկայացուցիչների իրավունքները կամ անվտանգությունը:
17. **Լրատվամիջոցների լուսաբանումը պատժի ավարտից հետո** - ազատագրկված անձան պատժի ավարտից հետո հասարակության հետ ինտեգրվելուն շվճառելու նպատակով այդ անձան ինքնությունը պետք է գաղտնի լինի, բացառությամբ եթե այդ անձինք համաձայնել են բացահայտել իրենց ինքնությունը կամ նրանց կատարած հանցանքն ունի հանրային նշանակություն:

ՀՀ Սահմանադրություն

Հաստ երկրներում արտահայտման ազատության և տեղեկատվության ազատ փոխանակման սկզբունքներն անրագրված են Սահմանադրության մեջ: Բայց և այնպես, քաղաքացիների կողմից այդ իրավունքներն իրականացնելու համար պահանջվում է տեղեկատվության ազատության մասին հատուկ օրենսդրություն:

Տեղեկություններ ստանալու իրավունքը ՀՀ-ում ճանաչվել է որպես մարդու իիմնարար իրավունքներից մեկը բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտով՝ ՀՀ Սահմանադրությամբ՝ «Մարդու և քաղաքացու

հիմնական իրավունքները և ազատությունները» գլխում՝ մարդու արժանապատվության, կյանքի, օրենքի առջև հավասարության, դատական պաշտպանության իրավունքների հետ մեկտեղ: ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածներն ամրագրում են յուրաքանչյուր քաղաքացու՝ տեղեկություններ ստանալու իրավունքը:

Այսպես, 27-րդ հոդվածն ամրագրում է.

 «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:

Դա նշանակում է, որ յուրաքանչյուրը՝ անկախ նրանից՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, թե ոչ, անկախ սեռից, տարիքից, մասնագիտությունից, քաղաքացիությունից կարող է բոլոր աղբյուրներից տեղեկություններ պահանջել, ստանալ և տարածել ցանկացած միջոցով, ընդ որում, ինչպես Հայաստանում, այսպես էլ Հայաստանից դուրս:

27.1 հոդվածում նշվում է.

 «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Այս հոդվածը սահմանում է յուրաքանչյուրի՝ կառավարման մարմիններին դիմելու և պարտադիր պատասխան ստանալու իրավունքը: Ընդ որում՝ հոդվածից հետևում է, որ պատասխանը չպետք է անհարկի ծգձգվի և պետք է լինի լիարժեք:

Մեկ այլ սահմանադրական հոդվածով՝ 23-րդ, ամրագրված է յուրաքանչյուրի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունքը:

Միաժամանակ միջոցներ են ձեռնարկված յուրաքանչյուր անձի ոչ միայն տեղեկություն ստանալու, այլ նաև կոնկրետ անձի վերաբերյալ անձնական բնույթի տեղեկությունները պաշտպանելու ուղղությամբ:

Սահմանադրության 23-րդ հոդվածն արձանագրում է, որ «Առանց անձի հանաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով»:

Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով»:

Այլ խոսքով, յուրաքանչյուրն ունի նաև անձնական և ընտանեկան բնույթի տեղեկատվության գաղտնության իրավունք:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42.1 հոդվածի՝

 «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որ քանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց եւրիանք կիրառելի են դրանց նկատմամբ»:

Քանի որ տեղեկություններ փնտրելու և ստանալու իրավունքի հրականացումը կարող է բխել իրավաբանական անձի շահերից, իսկ իրավաբանական անձն էլ ի դեմս իր դեկավարի (տնօրեն, նախագահ և այլն), հնարավորություն ունի փնտրել, ստանալ և վերլուծել իրեն անհրաժեշտ տեղեկությունները, հետևաբար տեղեկություններ փնտրելու և ստանալու իրավունքն իր եւրիանք կիրառելի է իրավաբանական անձանց նկատմամբ: Այսինքն, իրավաբանական անձանց վրա նույնպես տարածվում է ՀՀ Սահմանադրությանը ամրագրված՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը:

Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենք

ՀՀ Ազգային ժողովը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը ընդունել է 2003 թ.-ի սեպտեմբերի 23-ին: Այն ուժի մեջ է մտել 2003 թ.-ի նոյեմբերի 15-ին: Համեմիսանալով ՀՀ-ում տեղեկատվության ազատության ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտը՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը սահմանում է տեղեկատվության ազատության ոլորտում առաջացող հիմնական իրավահարաբերությունները՝ անդրադարձանալով տեղեկատվության ազատության ապահովման սկզբունքներին, տեղեկություն տնօրինողներին, տեղեկություններ փնտրելու և ստանալու համար սահմանված ժամկետներին, տեղեկության տրամադրումը մերժելու հիմքներին, կարգին և այլն:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Քրեական հետապնդման մարմինները և դրանց գործունեության հրապարակայնությունը

2.1. Քրեական հետապնդման մարմինները

՞ Որո՞նք են քրեական հետապնդում հարուցող մարմինները:

- ՀՀ Սահմանադրույան 103-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ հարուցում է քրեական հետապնդում, իսկ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ քրեական հետապնդման հարուցումը դատախազի բացառիկ լիազորություն է: Քրեական հետապնդման հարուցման կարգն ու հիմքերը սահմանվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով:

՞ Որո՞նք են հետաքննական և նախաքննական մարմինները:

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ հետաքննության մարմիններն են՝

- 1) ոստիկանությունը,
- 2) զորամասերի, զորամահավորումների հրամանատարները և գինվորական հիմնարկների պետերը՝ գինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպես նաև այն արարքների վերաբերյալ գործերով, որոնք կատարվել են զորամասի տարածքում կամ վերագրվում են ժամկետային ծառայության գինծառայողներին,
- 3) ուղամական ոստիկանությունը՝ օրենքով նրա հրավասությանը հանձնված գործերով,
- 4) Դայաստանի փրկարար ծառայության մարմինները՝ փրկարարական ծառայության հետ կապված գործերով,

- 5) հարկային մարմինները՝ հարկային հանցագործությունների գործերով,
- 6) մաքսային մարմինները՝ մաքսանենգության և, օրենքով նախատեսված դեպքերում, մտավոր սեփականության իրավունքի խախտնան գործերով,
- 7) ազգային անվտանգության մարմինները՝ օրենքով նրանց իրավասությանը հանձնված գործերով,
- 8) քրեակատարողական հիմնարկները՝ այդ հիմնարկների տարածքում կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերով,
- 9) օդանավի իրամանատարը՝ օդանավում թռիչքի ժամանակ տեղի ունեցած հանցագործությունների վերաբերյալ:

Նախաքննություն իրականացնող մարմինները նույնպես ամրագրված են գործող օրենսդրությամբ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործերով նախաքննություն կատարում են ոստիկանության, պաշտպանության բնագավառում պետական լիազոր, ազգային անվտանգության, հարկային կամ մաքսային մարմինների քննիչները:

Դատաիրավական բարեփոխումների արդյունքում 2007 թ. ստեղծվեց նաև անկախ քննչական մարմին՝ Դատուկ քննչական ծառայությունը, որն իրականացնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ օրենսդրի, գործադիր և դատական իշխանության մարմինների դեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց իրենց պաշտոնեական դիրքի կապակցությանը հանցագործությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև ընտրական գործընթացների հետ կապված քրեական գործերով նախաքննություն:

՞ Որո՞նք են քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում ՀՀ դատախազության հիմնական լիազորությունները:

- Մինչդատական վարույթում դատախազի լիազորությունները սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածում:

Ըստ այդմ՝ Դատախազը մինչդատական վարույթի ընթացքում լիազորված է՝

- հարուցել և իրականացնել քրեական հետապնդում, վերացնել քննիչի կայացրած որոշումը՝ քրեական գործը կարճելու մասին, դատարանի նիշնորդության հիման վրա հարուցել քրեական գործ, վերացնել հետաքննության մարմնի և քննիչի որոշումը քրեական գործի հարուցումը մերժելու մասին և հարուցել քրեական գործ,

- հանցագործության դեպքով հետաքննության մարմնին և քննիչին հանձնարարել նախապատրաստել նյութեր քրեական գործ հարուցելու համար,
- հետաքննության մարմնին և քննիչին հանձնարարել կատարելու անհետաձգելի քննչական գործողություններ,
- հետաքննության և նախաքննության նկատմամբ իրականացնել դատավարական դեկավարում:

Նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական դեկավարում իրականացնելով՝ դատախազի բացառիկ լիազորությունն է՝

- ստուգել կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և լուսնան մասին օրենքի պահանջների կատարումը հետաքննության մարմնի կողմից,
- ստուգման համար հետաքննության մարմնից, քննիչից պահանջել նյութեր, փաստաթղթեր, քրեական գործեր և քննության ընթացքի մասին տեղեկություններ, ինչպես նաև ծանոթանալ դրանց կամ դրանք ստուգել նրանց գտնվելու վայրում,
- ցանկացած քրեական գործ վերցնել հետաքննության մարմնից և հանձնել նախաքննության մարմնին, քրեական գործը սույն օրենսգրքի 190 հոդվածով սահմանված նախաքննության մի մարմնից հանձնել նախաքննության մեկ այլ մարմնին՝ բազմակողմանի, լրիվ և օրյեկտիվ քննություն ապահովելու նպատակով,
- անհրաժեշտության դեպքում քննչական բաժնի պետին գրավոր ցուցում տալ գործի քննությունը քննչական խմբի կողմից կատարելու վերաբերյալ:
- լուծել հետաքննության մարմնի աշխատակցին, քննիչին, ստորադաս դատախազին հայտնված բացարկի, ինչպես նաև վերջիններիս ինքնարացարկի հարցերը,
- հետաքննության մարմնին, քննիչին, գրավոր ցուցումներ տալ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու, որոշումներ ընդունելու վերաբերյալ,
- լուծել հետաքննության մարմնի, քննիչի, որոշումների և գործողությունների դեմ բերված բողոքները, բացառությամբ այն բողոքների, որոնց լուծումն օրենքով վերապահված է դատարանին,
- հետաքննության մարմնի աշխատակցին, քննիչին հեռացնել տվյալ գոր-

ծով քրեական դատավարությանը մասնակցելուց, եթե գործի քննության ընթացքում նրանք թույլ են տվել օրենքի խախտում,

- դիմել համապատասխան մարմններ քրեական հետապնդման անձեռնմխելությունից օգտվող անձանց կալանավորման հարցը լուծելու, քրեական պատասխանատվության ենթարկելու միջնորդություններով, եթե այդ անձինք քրեական գործով պետք է ներգրավվեն որպես մեղադրյալ,
- հաստատել մեղադրական եզրակացությունը, իսկ այն անձանց նկատմամբ քրեական գործերով, որոնք քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարել են ամմեղսունակ վիճակում կամ ամմեղսունակ են դարձել քրեական օրենսգրքով արգելված արարքը կատարելուց հետո՝ եզրափակիչ որոշումը. գործն ուղարկել դատարան՝ ըստ էության քննելու համար,
- հետաքննության մարմնին պարտադիր գրավոր ցուցումներ տալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման մասին՝ կապված քրեական գործով վարույթի հետ,
- դիմել դատարան՝ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և նրան կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բնակարանի խուզարկության միջնորդություններով,
- հրաժարվել մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց, կարծել քրեական գործով վարույթը կամ դադարեցնել քրեական հետապնդումը,
- միջոցներ ձեռնարկել տուժողի, վկայի և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանց պաշտպանության համար:

 **Որո՞նք են քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում ՀՀ ոստիկանության իիմնական խնդիրները: Ո՞ր գործերով է ոստիկանությունն իրականացնում քննություն:**

- Ոստիկանության խնդիրներից մինչդատական վարույթի ընթացքում կարելի է առանձնացնել՝ հանցագործությունների հայտնաբերումը և բացահայտումը, քրեական գործով նախնական քննությունը¹:

1. Տես՝ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված:

Հանցագործությունների և այլ իրավախսախումների դեմ պայքարելիս ՀՀ ոստիկանությունը պարտավոր է, մասնավորապես՝

- 1) ձեռնարկել միջոցներ հանցագործությունները հայտնաբերելու և բացահայտելու ուղղությամբ,
- 2) իրականացնել անհետաձելի քննչական գործողություններ՝ հանցագործություն կատարած անձանց և հանցագործության հետքերը հայտնաբերելու, ամրապնդելու, հանցագործությունը բացահայտելու նպատակով,
- 3) հարուցված քրեական գործերով իրականացնել նախնական քննություն, կասկածյալի ձերբակալում և օրենքով նախատեսված այլ գործողություններ,
- 4) միջոցներ ձեռնարկել հանցագործությամբ պատճառված նյութական վնասի հատուցումն ապահովելու ուղղությամբ:

Քրեական գործերի քննչական ենթակայության հարցը կանոնակարգված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածով։ Ըստ այդմ՝ ոստիկանությունը դիտարկվում է որպես հիմնական քննչական մարմին և նրան է վերապահված կյանքի և առողջության, անձի ազատության, պատվի և արժանապատվության, սեռական անձեռնմխելության և սեռական ազատության, մարդու եվ քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների դեմ ուղղված հանցագործություններով նախաքննության իրականացումը նախատեսված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-ից 164-րդ հոդվածներով, ընտանիքի և երեխայի շահերի, սեփականության դեմ ուղղված հանցագործություններով՝ նախատեսված՝ 166-ից 186.1-րդ հոդվածներով, տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններով՝ նախատեսված 187-րդ, 191-րդ, 192-րդ, 195-ից 201-րդ, 204-րդ, 212-ից 214-րդ, հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններով՝ նախատեսված 218-րդ, 222-րդ, 223-րդ, 225-րդ, 225.1-րդ, 227-ից 232-րդ, 235-ից 249-րդ, համակարգչային տեղեկատվության անվտանգության, հասարակական կարգի և բարոյականության, բնակչության առողջության, շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործություններով՝ նախատեսված 251-ից 298-րդ, սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններով՝ նախատեսված 300-րդ, 300.1-րդ, 300.2-րդ, 301-րդ, 301.1-րդ, պետական ծառայության, կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություններով՝ նախատեսված 308-ից 328-րդ, 331-րդ, ինչպես նաև արդարադատության դեմ ուղղված հանցագործություններով՝ նախատեսված 332-ից 332.3-րդ, 336-րդ, 341-րդ, 343-ից 345.1-րդ, 347-ից 355-րդ հոդվածներով։

՞ Որո՞նք են քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում ՀՀ ազգային անվտանգության մարմինների հիմնական լիազորությունները:

- Ազգային անվտանգության մարմինների գործունեությունն իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով՝
 - ա) հետախուզական գործունեություն,
 - բ) հակահետախուզական գործունեություն,
 - գ) ռազմական հակահետախուզական գործունեություն,
 - դ) պետական սահմանի պահպանություն,
 - ե) պայքար հանցագործությունների դեմ։

Ազգային անվտանգության մարմինները հանցավորության դեմ պայքարի շրջանակներում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացնում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, կատարում են հետաքննություն և նախաքննություն՝ ուղղված իրենց քննչական ենթակայությանը վերապահված հանցագործությունների բացահայտմանը, կանխմանը և խափանմանը։ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի համաձայն՝ ազգային անվտանգության ծառայության քննչական մարմիններին են վերապահված սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության, հասարակական անվտանգության, կառավարման կարգի դեմ ուղղված, պետական սահմանն ապօրինի հատելու, խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններով, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու, մաքսանենգության դեպքերով նախաքննության իրականացումը՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ, 215-րդ, 217-րդ, 217.1, 219-ից 221-րդ, 224-րդ, 226-րդ, 233-րդ, 234-րդ, 250-րդ, 299-րդ, 302-ից 307-րդ, 329-րդ, 330-րդ, 384-ից 397.1-րդ հոդվածներով։

՞ Որո՞նք են ՀՀ հատուկ քննչական ծառայության հիմնական լիազորությունները:

- Հատուկ քննչական ծառայությունն իրականացնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների² (ՀՀ Նախագահը, վարչապետը, փոխվարչապետը, պատգամավորները, սահմանադրական

2. Տես՝ «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետ։

դատարանի նախագահը և անդամները, դատարանների նախագահները և դատավորները, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարը, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը, ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարը, նախարարները, նրանց տեղակալները, ՀՀ կառավարության առջնորդները պետական կառավարման նախագահների ղեկավարները, նրանց տեղակալները, մարզպետները, նրանց տեղակալները, Երևանի քաղաքապետը, նրա տեղակալները, ՀՀ վերահսկիչ պալատի նախագահը եւ խորհրդի անդամները, ՀՀ կենտրոնական բանկի նախագահը և խորհրդի անդամները, ՀՀ կարգավորող հանձնաժողովների ղեկավարները և անդամները, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը և անդամները, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահը և տեղակալը), պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց³ իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև ընտրական գործընթացների հետ կապված քրեական գործերով⁴ նախաքննություն։ Ընդ որում՝ ընտրական իրավունքի իրացման հետ կապված ոչ բոլոր գործերով է քննությունն իրականացնում հատուկ քննչական ծառայությունը։

Օրենսդիրը ՀՔԾ-ի քննչական ենթակայությանն է վերապահել ընտրական գործընթացների վերաբերյալ 4 հանցակազմ։ Դրանք են՝ ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ (Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը), 150-րդ (Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կերպելը), 154.1-րդ (Կեղծ ընտրական քվեարերթիկներ կամ քվեարկության ծրարմեր պատրաստելը կամ ակնհայտ կեղծ ընտրական քվեարերթիկներ կամ քվեարկության ծրարմեր հանձնելը կամ իրացնելը), 154.2-րդ (Ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելը) հոդվածները։

Անհրաժեշտության դեպքում ՀՀ գլխավոր դատախազը կարող է քննչական այլ մարմինների քննիչների վարույթից վերցնել և հատուկ քննչական ծառա-

3. Դատախազները, պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի քննիչները, ոստիկանության (բացառությամբ ոստիկանության գործերի), ազգային անվտանգության (բացառությամբ սահմանապահ գործերի և գինված սոորաբաժնումների), հարկային, մաքսային, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող, քրեակատարողական և փրկարարական մարմինների պաշտոնատար անձինք (տես՝ «Դատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետ):

4. Հանցագործություններ, որոնք նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ, 150-րդ, 154.1-րդ և 154.2 -րդ հոդվածներով։

յության քննիչների վարույթին հանձնել քրեական գործեր, որոնք առնչվում են վերը թվարկված պաշտոնատար անձանց հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործություններին, կամ որոնցով այդ անձինք ճանաչված են որպես տուժող:

Դատուկ քննչական ծառայության կողմից իրականացվող նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնում են ՀՀ գլխավոր դատախազը և նրա լիազորած դատախազները։

Դատուկ քննչական ծառայության պետը իր լիազորությունների շրջանակում ընդունում է հատուկ քննչական ծառայության գործունեության կազմակերպմանն ուղղված որոշումներ, տալիս է հրամաններ, հանձնարարականներ և ցուցումներ⁵։

 **Որո՞նք են իրավապահ գործունեության շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության հիմնական լիազորությունները և խնդիրները։**

- Իրավապահ գործունեության շրջանակներում պաշտպանության նախարարության քննչական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների կանխարգելումը, կանխումը և խափանումը, ինչպես նաև զորամասի տարածքում կատարված կամ ժամկետային գինվորական ծառայության գինծառայողներին կամ պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնում և կազմակերպություններում (որոնց բաժնետոռների կառավարման լիազորությունը հանձնված է պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնին) ծառայություն իրականացնող անձանց վերագրով հանցագործությունների վերաբերյալ գործերով նախաքննություն։

ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայությունը նախարարության աշխատակազմից դուրս առանձնացված ստորաբաժնում է, որն իր լիազորությունների սահմաններում նախաքննություն է իրականացնում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով, օրենքով սահմանված միջոցներ է ձեռնարկում գործ հարուցելու արիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու համար, ապահովում և իրականացնում է նախաքննության ոլորտում պետական քաղաքականության մշակման և իրականացման գծով նախարարության գործառույթները, ՀՀ օրենսդրու-

5. Տես՝ «Դատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 4-րդ և 16-րդ հոդվածներ։

թյան անշեղ կիրառումը քրեադատավարական ընթացակարգում, գլխավորում և ղեկավարում է քննչական ծառայության համակարգի ստորաբաժանումների գործունեությունը⁶:

 **Որո՞նք են հանցավորության դեմ պայքարի շրջանակներում ՀՀ ԿԱ պետական Եկամուտների կոմիտեի հիմնական խնդիրները և լիազորությունները:**

- ՀՀ պետական Եկամուտների կոմիտեի խնդիրներից են ՀՀ հարկային օրենսդրության պահանջների խախտումների (հարկային հանցագործությունների) կանխումը, խափանումը, այդ խախտումների բացահայտումը, մաքսանենգործության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլ հանցագործությունների, ինչպես նաև ՀՀ մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխմանը վերաբերող մասով ՀՀ օրենսդրության այլ խախտումների դեմ պայքարը, ՀՀ մաքսային սահմանով թժրամիջոցների, գենքի, մշակութային, պատմական ու հնագիտական նշանակություն ունեցող առարկաների, մտավոր սեփականության օբյեկտների, ոչնչացման վտանգի տակ գտնվող կենդանատեսակների ու բուսատեսակների, դրանց մասերի և այլ ապրանքների ապօրինի տեղափոխման կանխարգելումը, ինչպես նաև միջազգային ահարեւկչության դեմ պայքարին աջակցելը⁷:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ՀՀ պետական Եկամուտների կոմիտեին վերապահված լիազորություններն իրականացնում են նրա կառուցվածքային ստորաբաժանումները՝ քննչական և հետաքննության վարչությունները:

2.2. Քրեական հետապնդման մարմինների գործունեության հրապարակայնությունը

 **Որո՞նք են ՀՀ Դատախազության գործունեության հրապարակայնության ապահովման հիմնական դրույթները և որո՞նք են սահմանափակումները:**

- Դատախազության գործունեության հրապարակայնության ապահովումն ամրագրված է «Դատախազության մասին» ՀՀ օրենքով, որի 5-րդ հոդվածն ուղղակի սահմանում է, որ Դատախազությունը հանրությանը տեղեկացնում է իր իրականացրած գործունեության մասին այնքանով, որքանով դա չի հակառակ մարդու և քաղաքացու իրավունքներին, ազատություններին և օրինական շահերին, ինչպես նաև պետական և օրենքով պաշտպանվող այլ գաղտնիքների պահպանությանը:

ՀՀ դատախազությունը նույն իիմբերով կարող է տեղեկատվություն չտրամադրել այն դեպքերում, եթե անհրաժեշտ է պաշտպանել քրեական դատավարությանը մասնակցող անձանց կամ նրանց մերձավոր ազգականներին, ինչպես նաև ազգային անվտանգությունը և հասարակական կարգը: Պետք է նշել, որ նշված սահմանափակումները վերաբերում են նաև հետաքննության և նախաքննության մարմիններին:

Դատախազությունը նաև պարտավոր է հնարավորինս սահմանափակել տրամադրվող տեղեկատվությունը (չիրապարակել), եթե դա խախտում է անմեղության կանխավարկածի սկզբունքը : Կամ, այլ կերպ ասած, թեև դատախազությունը որպես մեղադրանքի կողմ ունի որոշակի ազատություն այնպիսի տեղեկատվություն հրապարակելու (տրամադրելու) առնչությամբ, որը կարող է մեկնաբանվել որպես անձի անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտում, սակայն այդուամենայնիվ նա կարող է այդ տեղեկությունը չտրամադրել: Հետաքննության և նախաքննության մարմինները նման ազատություն չունեն և պարտավոր են տեղեկատվությունը չտրամադրել (չիրապարակել), եթե դա խախտում է անմեղության կանխավարկածի սկզբունքը:

Միաժամանակ կարևորելով դատախազության աշխատանքների հրապարակայնության ապահովումը՝ Դատախազության մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրվել է, որ ՀՀ Գլխավոր դատախազը յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով (այսուհետ՝ Ազգային ժողով) և Հանրապետության Նախագահին է ներկայացնում հաղորդում դատախազության նախորդ տարվա գործունեության մասին: Ազգային ժողովին հաղորդումը ներկայացվում է Ազգային ժողովի կամոնա-

6. Տես՝ ՀՀ կառավարության 2008 թ.-ի դեկտեմբերի 25-ի N 1554-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության քննչական ծառայության կանոնունադրության» 1-ին կետ:

7. Տես՝ ՀՀ կառավարության 2008 թ.-ի սեպտեմբերի 4-ի N 1005-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կառավարության առմբեր պետական Եկամուտների կոմիտեի կանոնադրության» 13-րդ կետի 1-ին ենթակետի «բ» կետ և 2-րդ ենթակետի «է» կետ:

կարգով սահմանված կարգով: Յարկ է նշել, որ դատախազությունը, հաշվի առնելով դատախազության գործունեության առանձնահատկությունները և միաժամանակ կարևորելով քաղաքացիների տեղեկություն ստանալու իրավունքի իրացումը, կազմակերպում է իր աշխատանքների լուսաբանումը: Այդ նպատակով ապահովում է դատախազության պաշտոնական ինտերնետային էջի սպասարկումը, իրատարակում «Օրինականություն» ամսագիրը, պատրաստում դատախազության՝ Սահմանադրությանը իրեն վերապահված գործառությունների վերաբերյալ հեռուստահաղորդումներ:

Ինչպես է ապահովում ՀՀ հատուկ քննչական ծառայության գործունեությունը իրապարակայնությունը:

- Հատուկ քննչական ծառայությունը իրապարակում է տեղեկատվություն իր գործունեության մասին: Հատուկ քննչական ծառայության պետք յուրաքանչյուր տարի ՀՀ Ազգային ժողովը և Հանրապետության Նախագահին է ներկայացնում գրավոր հաղորդում՝ հատուկ քննչական ծառայության նախորդ տարվա գործունեության մասին:

Որո՞նք են քրեական հետապնդման մարմինների կողմից տնօրինվող տեղեկատվական շտեմարանները (բազաները) և ինչպես օգտվել դրանցից:

- ՀՀ ոստիկանությունն իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական հաշվառումների, օպերատիվ, հետախուզական, քրեագիտական, վիճակագրական և այլ տեղեկատվական շտեմարանների կազմավորումն ու օգտագործումը, ՀՀ ոստիկանության ծառայությունների, մարմինների և շահագրգիռ պետական գերատեսչությունների ու կազմակերպությունների տեղեկատվական սպասարկումը, ՀՀ ոստիկանության համակարգում վիճակագրության կազմակերպումը⁹:

Տեղեկատվական նշված շտեմարանների մեջ մասն ըստ էության հանդիսանում են անհատական տվյալների տեղեկատվական բազաներ, որոնց վրա (քրեական հետապնդման մյուս մարմինների կողմից տնօրինվող անհատական տվյալների տեղեկատվական բազաների վրա նույնական) տարածվում է «Անհատական տվյալների մասին» ՀՀ 2002 թվականի հոկտեմբերի 8-ի ՀՕ-422-Ն օրենքը, որով կարգավորում են պետական և տեղական ինքնակառա-

8. Տես՝ «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 6-րդ մաս:

9. Տես՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2004 թ.-ի ապրիլի 29 N 806-Ն որոշման 8-րդ կետի «իե» ենթակետ:

վարման մարմինների, պետական կամ համայնքային իիմնարկների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անհատական տվյալների մշակմանն առնչվող հարաբերությունները:

Պետք է նշել, որ «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքը չի կարգավորում պետական գաղտնիք համարվող անհատական տվյալների, հանրամատչելի առյուղմերում իրավարակված անհատական տվյալների, ինչպես նաև ֆիզիկական անձանց կողմից իրենց անձնական, ընտանեկան և նմանօրինակ այլ նպատակներով անհատական տվյալների մշակմանն առնչվող հարաբերությունները:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անհատական տվյալների մշակումը համարվում է օրինական, եթե՝

- 1) անհատական տվյալները մշակվում են տվյալների սուբյեկտի համաձայնությամբ, այսինքն՝ ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տվյալ կարող է տրամադրվել (փոխանցվել) միայն այն ֆիզիկական անձի համաձայնությամբ, ում վերաբերում են անհատական տվյալներ,
- 2) անհատական տվյալների մշակումը նախատեսված է օրենսդրությամբ, կամ ուղղակի բխում է օրենքից, կամ անհրաժեշտ է օրենքի պահանջներով կատարելու համար, այսինքն՝ օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում՝ անկախ այն անձի համաձայնությունից, ում վերաբերում են տվյալները, տեղեկությունը կարող է տեղեկատվական բազայից տրամադրվել (փոխանցվել, օգտագործվել): Օրենքով նախատեսված այդպիսի դեպքերից է, օրինակ՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը, ըստ որի՝ տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է նաև ավելացնելու հաստիքացուցակները, ինչպես նաև պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները, որոնք, ըստ էության, անհատական տվյալներ են, քանի որ դրանք բոլոր են տալիս նույնականացնել անհատի ինքնությունը,
- 3) անհատական տվյալները մշակվում են պետական և հասարակական անվտանգությունն անմիջական սպառնալիքից պաշտպանելու համար, այսինքն՝ այն դեպքերում, երբ դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգությունն անմիջական սպառնալիքից պաշտպանելու համար և այս դեպքում նույնական անձանի այն անձի համաձայնության, ում վերաբերում են տվյալները, տեղեկությունը կարող է տրամադրվել (փոխանցվել, օգտագործվել) այլ անձի: Այդպիսի դեպքերից է «Տեղե-

կատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասը, որի մասին արդեն նշել ենք:

«Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ օրենքով սահմանվում են տեղեկատվական բազաներից (այդ թվում՝ տեղեկատվական շտենարաններից) օգտվելու (տեղեկություններ ստանալու) երկու ռեժիմ՝

- 1) Տեղեկատվական բազաներից տեղեկություններ ստանալը այն անձանց կողմից, ովքեր համարվում են անհատական տվյալների սուբյեկտ, այսինքն այն ֆիզիկական անձը, ում վերաբերում են անհատական տվյալները: Այդ դեպքում, տեղեկություններ փնտորող անձը կարող է անվճար (եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ¹⁰) և առանց իր պահանջով հիմնավորելով ստանալ հետևյալ տեղեկությունները¹¹:
 - իր անհատական տվյալների մշակման փաստի վերաբերյալ,
 - իրեն վերաբերող՝ մշակվող անհատական տվյալների բովանդակության և դրանց ձեռքբերման աղբյուրի վերաբերյալ,
 - առանց իր համաձայնությամ՝ տվյալների փոխանցման հիմքերի վերաբերյալ:

Բացի այդ տեղեկատվական բազան մշակողը պարտավոր է տվյալների սուբյեկտի համաձայնությունը ձեռք բերելիս նրան հայտնել՝

- անհատական տվյալների մշակման նպատակը,
 - մշակողի անվանումը (անունը) և գտնվելու (բնակության) վայրը,
 - տեղեկություններ այն սուբյեկտների մասին, ում տրամադրվելու են կամ կարող են տրամադրվել անհատական տվյալները,
 - հանրամատչելի աղբյուրներում հրապարակման ենթակա անհատական տվյալները:
- 2) Տեղեկատվական բազաներից տեղեկություններ ստանալը երրորդ անձանց կողմից, այսինքն, այն անձանց կողմից ովքեր չեն հանդիսանում անհատական տվյալների սուբյեկտ կամ մեկ այլ տեղեկատվական բազայի վարող: Նշված անձինք տեղեկություններ կարող են ստանալ միայն այն դեպքում, եթե առկա է այն ֆիզիկական անձի համաձայնությունը,

10. Օրինակ՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով:

11. Տես՝ «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված:

ում վերաբերում են փնտրվող (պահանջվող) տեղեկությունը կամ առկա են հետևյալ հիմքերը՝

- տեղեկությունն ընդգրկված է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների գործունեությանը, տնտեսական իրադրությանը, բնակչության կարիքներին, շրջակա միջավայրին, սամհտարահամաճարակային իրավիճակին, ժողովրդագործականը վերաբերող՝ պետական և համայնքների բյուջեների հաշվին վարվող, ապանձնավորված անհատական տվյալներ (այսինքն՝ ֆիզիկական անձանց վերաբերող ցանկացած տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ չի տալիս նույնականացնել անհատի ինքնությունը) պարունակող տեղեկատվական բազաներում,
- տեղեկությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների կողմից անձնավորված անհատական տվյալներ պարունակող գրադարանային և արխիվային փաստաթուղթ է, որը հասարակական հետաքրքրություն է ներկայացնում կամ անհրաժեշտ է քաղաքացիների իրավունքների և ազատությունների իրականացնան կամ պարտականությունների կատարման համար¹²:

Անհատական տվյալների տեղեկատվական բազաների մատչելիությունը սահմանափակվում է նաև այն դեպքերում, եթե այդ տեղեկատվական բազաները պարունակում են օրենքով սահմանված գաղտնի տեղեկություններ:

 **Որո՞նք են քրեական հետազոտման մարմինների կողմից պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները:**

- «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի բնորոշմամբ քրեական հետազոտման մարմինները տեղեկատվություն տնօրինողներ են, ուստի նրանք պարտավոր են նշված օրենքի 7-րդ հոդվածի համաձայն հրապարակել մասնավորապես հետևյալ տեղեկությունները՝

- այս տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կամնել պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը,

12. Տես՝ «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված:

- հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները և ծառայությունները,
- բյուջեն,
- գրավոր հարցումների ձևերը և դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները,
- հաստիքացուցակները, ինչպես նաև պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրությունը, նաև ազիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները,
- աշխատանքի ընդունման կարգը և թափուր աշխատատեղերը,
- քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը և վայրը,
- տնօրինվող տեղեկությունների ցանկը և դրանց տնօրինման կարգը,
- թվարկված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները:

Բացի այդ, ինչպես արդեն նշել ենք, որ ՀՀ գլխավոր դատախազը և ՀՀ հատուկ քննչական ծառայության պետը յուրաքանչյուր տարի Ազգային ժողով և Հանրապետության Նախագահին են ներկայացնում հաղորդում համապատասխանաբար դատախազության և հատուկ քննչական ծառայության նախորդ տարվա գործունեության մասին: Թեև, ՀՀ օրենսդրությամբ այդ հաղորդումների բովանդակությունը և ծավալը սահմանված չէ, սակայն կարող ենք նշել, որ ՀՀ գլխավոր դատախազի 2010թ. հաղորդումը մասնավորապես ներառում է:

- գրանցված հանցագործությունների և դրանց աճի կամ նվազման վերաբերյալ վիճակագրական տվյալներ, հանցագործությունների բացահայտումների ցուցանիշները,
- որոշակի հանցագործությունների դեպքերի աճի կամ նվազման հիմնական գործուները,
- նախաքննության մարմինների գործունեության վերաբերյալ գնահատականներ,
- քրեական գործերի վարույթը կասեցնելու և կարճելու որոշումների ստուգման վերաբերյալ թվային տվյալներ (այդ թվում վերացված որոշումների թիվը),

- մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված քրեական գործերի և դատապարտված անձանց թվի վերաբերյալ տվյալներ,
- դատախազական աշխատանքի անփոփ տվյալներ (մասնավորապես՝ պետական շահերի պաշտպանության հայցերի և դատական ակտերի բողոքարկումների քանակը),
- ՀՀ գինվորական դատախազության գործունեության վերաբերյալ տվյալներ,
- դատախազության կազմակերպա-վերահսկողական գործունեության վերաբերյալ տվյալներ (մասնավորապես՝ ընդունված հրամանների, կարգադրությունների, կարգապահական վարույթների թվեր):
- միջազգային-իրավական օգնության բնագավառում ՀՀ դատախազության կողմից կատարված աշխատանքները:

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

Քրեական գործերի վերաբերյալ տեղեկատվության տնօրինման առանձնահատկությունները

3.1. Քրեական գործերի հարուցումը և քրեական գործերի ենթակայությունը

 Ի՞նչ է քրեական գործը:

- Քրեական գործը ՀՀ քրեական օրենսգործով չթույլատրված մեկ կամ մի քանի ենթադրաբար կատարված արարժների կապակցությամբ քրեական հետապնդման մարմնի (դատախազի (մեղադրողի), քննիչի, հետաքննության մարմինի) կամ դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգործով սահմանված կարգով իրականացվող առանձին վարույթ է¹³:

Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, օրենքով նախատեսված բոլոր միջոցառությունները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար:

Քրեական գործի վարույթը ներառում է քրեական գործի հարուցման նախապատրաստումը, հարուցումը, քրեական հետապնդումը, ինչպես նաև հարուցված գործի և իրականացվող քրեական հետապնդման հետ կապված բոլոր դատավարական գործողությունները և որոշումների ընդունումը¹⁴:

Քրեական գործ հարուցելուց հետո՝

- 1) դատախազը նախաքննություն կատարելու համար գործն ուղարկում է քննիչին,

- 2) քննիչը ձեռնամուխ է լինում գործով նախաքննության կատարմանը՝ այդ մասին անհապաղ տեղյակ պահելով դատախազին,
- 3) հետաքննության մարմնի պետը հետաքննության մարմնի աշխատակցին հանձնարարում է կատարել քննչական անհետաձելի գործողություններ կամ դրանք կատարում է անձանք՝ քրեական գործ հարուցելու մասին անհապաղ տեղյակ պահելով դատախազին:

Ընդ որում, նախաքննությունը պարտադիր է բոլոր քրեական գործերով: Քրեական գործով հետաքննությունը կարող է լինել քննության սկզբնական փուլ՝ քրեական գործ հարուցելու պահից 10 օրվա ընթացքում¹⁵:

3.2. Դատավարական գործողությունների արձանագրումը և քրեական գործի նյութերը

 Ի՞նչ է արձանագրությունը:

- Դատավարական գործողությունների ընթացքը և արդյունքները արտացոլվում են արձանագրությունում, որը կազմվում է դատավարական գործողության ընթացքում կամ դրա ավարտից անմիջապես հետո: Արձանագրությունը գրվում է ձեռքով կամ պատրաստվում տեխնիկական միջոցների օգնությամբ: Դատավարական գործողություններ իրականացնելիս կարող են կատարվել սղագրում, լուսանկարահանում, կինոնկարահանում, ձայնագրում և տեսագրում: Լուսանկարչական նեգատիվները և լուսանկարները, կինոժապավելները, դիապոզիտիվները, հարցաքննության ձայնագրությունը, տեսաերիզները, համակարգչային տեղեկատվության կրիչները, գծագրերը, պլանները, ծեփապատճենները, հետքերի դրոշմները, որոնք կազմվել կամ պատրաստվել են դատավարական գործողության ընթացքում, կցվում են քրեական գործին:

Կարելի է նշել հետևյալ քննչական և դատական գործողությունների արձանագրությունները՝

- 1) զննության,
- 2) քննման,
- 3) ճանաչման ներկայացնելու,
- 4) արտաշիրիմման,

13. Տես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգործի 6-րդ հոդված:

14. Տես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգործի 26-րդ հոդված:

15. Տես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգործի 187-րդ և 188-րդ հոդվածներ:

- 5) առօրավճան,
- 6) խուզարկության,
- 7) գույքի վրա կալանք դնելու,
- 8) նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելու,
- 9) հեռախոսային խոսակցությունները լսելու,
- 10) նմուշներ ստանալու,
- 11) քննչական փորձարարության¹⁶:

Ի՞նչ տեղեկություն է պարունակում արձանագրությունը:

- Արձանագրությունում նշվում են՝
 - 1) դատավարական գործողության իրականացնան վայրը, օրը, ամիսը, տարեթիվը, սկսելու և ավարտելու ժամանակը՝ րոպեի ճշտությամբ,
 - 2) արձանագրությունը կազմողի պաշտոնը և ազգանունը,
 - 3) դատավարական գործողությանը մասնակցող յուրաքանչյուր անձի ազգանունը, անունը, հայրանունը, անհրաժեշտության դեպքում՝ հասցեն և անձնական այլ տվյալներ:

Դատավարական գործողությունները արձանագրություններում նկարագրվում են այն հաջորդականությամբ, որով իրականուն տեղի են ունեցել: Արձանագրությունում նշվում են դրանց կատարման ընթացքում ծեռք բերված և գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները, շարադրվում են դատավարական գործողության մասնակիցների հայտարարությունները: Արձանագրությունում նշվում են տեղեկություններ դատավարական գործողության ընթացքում կիրառված տեխնիկական միջոցների, դրանց օգտագործման կարգի և պայմանների, այն օբյեկտների, որոնց նկատմամբ տեխնիկական միջոցները կիրառվել են, և ստացված արդյունքների, ինչպես նաև մասնակիցներին տեխնիկական միջոցների կիրառման մասին նախազգուշացնելու վերաբերյալ: Արձանագրությունը ստորագրում են քննիչը և դատավարական գործողությանը մասնակցող անձինք: Արձանագրությունը պետք է պարունակի նաև գրառումներ դատավարական գործողության մասնակից:

16. Տես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մաս:

ներին իրենց իրավունքներն ու պարտականությունները բացատրելու, պարտականությունները չկատարելու հետևանքները պարզաբանելու, դատավարական գործողության իրականացման ընդհանուր կարգը բացատրելու մասին, ինչը հավաստվում է դատավարական գործողության մասնակիցների ստորագրությամբ¹⁷:

Որո՞նք են քրեական գործի նյութերը:

- Քրեական գործի նյութերը (փաստաթղթեր և այլ առարկաներ, որոնք քրեական գործի բաղկացուցիչ մասն են կամ ներկայացված են գործին կցվելու համար, հաղորդումներ, ինչպես նաև փաստաթղթեր և այլ առարկաներ, որոնք կարող են նպաստել գործով վարույթի ընթացքում նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելուն) պահպում են քրեական գործում: Քրեական գործի փաստաթղթերը կազմվում են մեկ կամ մի քանի թղթապանակներով՝ յուրաքանչյուրի կազմի վրա համապատասխան գրառումներով և նրանցում պարունակվող նյութերի ցուցակով: Քրեական վարույթին իրականացնող մարմինը իրականացնում է գործում եղած յուրաքանչյուր փաստաթղթի ըստ էջերի համարակալում՝ դրանց կցման ժամանակագրական կարգով: Բոլոր դատավարական որոշումները և դատական նիստի արձանագրությունները շարադրվում են համարակալված ձևարդերի վրա, որոնք համարվում են խիստ հաշվառման փաստաթղթեր: Այլ առարկաները և փաստաթղթերը, որոնք իրենց մեծածավալության կամ իրենց բնույթով չեն կարող պահպել քրեական գործում, պահպում են գործից առանձին՝ որպես նրա անբաժան մաս: Քրեական գործից առանձին պահպող առարկաների և փաստաթղթերի ցուցակը կցվում է քրեական գործին: Քրեական գործի փաստաթղթերը կարող են պատճենահանվել թղթային կամ էլեկտրոնային կրիչի վրա քրեական վարույթին իրականացնող մարմնի կողմից, որը հավաստում է պատճենի ճշտությունը¹⁸:

Ի՞նչ տեղեկություններ են պարունակում քրեական գործի նյութերը:

- Քրեական գործի նյութերում ընդգրկվում են մասնավորապես հետևյալ տեղեկությունները՝

- քրեական գործով վարույթին իրականացնող մարմինների որոշումները և գրավող հանձնարարականները (ցուցումները),

17. Տես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդված:

18. Տես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդված:

- քննչական և դատավարական գործողությունների արձանագրությունները (մասնավորապես՝ հարցաքննությունների, խուզարկության և առգրավման, ճանաչման ներկայացմելու, նմուշներ ստանալու, գործի նյութերին ծանոթացմելու),
- փորձագետների եզրակացությունները,
- մեղադրական եզրակացությունները,
- մեղադրական եզրակացության հավելվածները,
- Այլ փաստաթղթեր:

Հարցաքննության արձանագրությունում արտացոլվում են հարցաքննության փաստը, ընթացքը և արդյունքները: Հարցերը և դրանց պատասխանները գրի են առնվում նույն հաջորդականությամբ, որ տրվել են հարցաքննության ընթացքում: Արձանագրությունում նշվում են բոլոր հարցերը, այդ թվում՝ նրանք, որոնք չեն ընդունվել քննիչի կողմից, կամ որոնց հրաժարվել են պատասխանել հարցաքննվող անձը: Հարցերին պատասխանելուց հրաժարվելու պատճառները նշվում են արձանագրությունում: Եթե հարցաքննության ընթացքում հարցաքննվող անձին ներկայացվում են իրեղեն ապացույցներ կամ փաստաթղթեր, կամ հրապարակվում են քննչական այլ գործողությունների արձանագրություններ կամ վերարտադրվում են ձայնագրման և (կամ) տեսագրման նյութեր կամ քննչական գործողությունների նկարահանումներ, ապա այդ մասին նշում է կատարվում հարցաքննության արձանագրությունում: Եթե հարցաքննության ընթացքում իրականացվել են լուսանկարահանում, ձայնագրում և (կամ) տեսագրում, կինոնկարահանում, ապա արձանագրությունը պետք է պարունակի՝

- 1) նշումներ լուսանկարահանում, ձայնագրում և (կամ) տեսագրում, կինոնկարահանում կատարելու մասին,
- 2) նշումներ օգտագործվող տեխնիկական միջոցների, լուսանկարահանման, ձայնագրման և (կամ) տեսագրման, կինոնկարահանման պայմանների կամ ձայնագրման և (կամ) տեսագրման, կինոնկարահանման ընդհատման տևողության մասին,
- 3) հարցաքննվող անձի հայտարարությունները և դիտողությունները լուսանկարահանում, ձայնագրում և (կամ) տեսագրում, կինոնկարահանում կատարելու վերաբերյալ,
- 4) քննիչի և հարցաքննվող անձի՝ արձանագրության ճշտությունը հավաստող ստորագրությունները,

- 5) նշումներ հարցաքննության ընթացքում հարցաքննվող անձի կողմից սխեմաներ, գծագրեր, նկարներ, դիագրամներ պատրաստելու և դրանք արձանագրությանը կցելու մասին: Հարցաքննության արձանագրությունում նշվում են բոլոր այն անձանց տվյալները, ովքեր մասնակցել են հարցաքննությանը: Նրանցից յուրաքանչյուրը պետք է ստորագրի արձանագրությունը, ինչպես նաև դրանում արված բոլոր լրացումները և ուղղումները¹⁹:

Ճանաչման ներկայացմելու արձանագրությունում նշվում են ճանաչողի տվյալները և դատավարական կարգավիճակը, ինչպես նաև նրա նախագօւշացված լինելը ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու, ակնհայտ սուտ ցուցմունքներ տալու համար սահմանված պատասխանատվության մասին: Արձանագրության մեջ նշվում են նաև ճանաչման ներկայացված անձանց տվյալները և առարկաների նկարագրությունը մանրամասնորեն շարադրելով այն հատկանիշները, որոնցով կատարվել է դրանց ճանաչումը, ինչպես նաև ճանաչման ներկայացմելու տեղը, ժամանակը, ճանաչումը կատարող անձի ազգանունը և պաշտոնը: Արձանագրությունն ստորագրվում է քննչական գործողության բոլոր մասնակիցների կողմից: Եթե կատարվել է լուսանկարում, տեսանկարահանում, կինոնկարահանում, ձայնագրում կամ այլ տեսակի ամրագրում, այդ մասին նշվում է արձանագրության մեջ: Ամրագրման արդյունքում ստացված լուսանկարները, ժապավենները և այլ փաստաթղթերը կցվում են արձանագրությանը²⁰:

Խուզարկության և առգրավման արձանագրությունում նշվում են քննչական գործողության կատարման տեղը, ժամանակը, հանգամանքները, փնտրվող առարկաները կամովին ներկայացմելու և հետախուզվողի անձանց ինքնական հանձնվելու մասին, խուզարկություն կատարող անձի անունը, ազգանունը, պաշտոնը, ընթերակաների անունները, ազգանունները և հասցեները, ինչպես նաև քննչական գործողության այլ մասնակիցների անունները, ազգանունները, պաշտոնները և դատավարական կարգավիճակը: Արձանագրությունում նշվում է նաև ամբողջ վերցվածի մասին՝ ճշգրիտ նշելով դրանց քանակը, չափը, քաշը, անհատական հատկանիշները և այլ առանձնահատկությունները: Եթե քննչական գործողությունները կատարելիս փորձեր են եղել ոչնչացմելու կամ թաքցնելու հայտնաբերված առարկաները կամ փաստաթղթերը, ապա այդ մասին նույնպես նշվում է արձանագրության մեջ²¹:

19. Տես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 209-րդ հոդված:

20. Տես՝ ՀՀ քրեական դատավարության 224-րդ հոդված:

21. Տես՝ ՀՀ քրեական դատավարության 230-րդ հոդված:

Խուզարկության կամ առգրավման արձանագրության պատճենը ստորագրությամբ հանձնվում է այն անձին, ում նոտ կատարվում է քննչական գործողությունը, կամ նրա ընտանիքի չափահաս անդամներին, իսկ նրանց բացակայության դեպքում՝ այն բնակարանային շահագործման կազմակերպության կամ տեղական ինքնակառավարման նարմնի ներկայացուցչին, որի տարածքում կատարվել է քննչական գործողությունը: Եթե խուզարկությունը կամ առգրավումը կատարվել է ծեռնարկության, հիմնարկի, կազմակերպության, զորամասի տարածքում, արձանագրության պատճենը հանձնվում է դրանց ներկայացուցչին²²:

Փորձագետի եզրակացության մեջ պետք է նշված լինի՝ երբ, որտեղ, ում կողմից (անուն, ազգանուն, հայրանուն, կրթությունը, մասնագիտությունը, մասնագիտական աշխատանքային ստաժը, գիտական աստիճանը և կոչումը, զբաղեցրած պաշտոնը) և ինչի հիման վրա է կատարվել փորձաքննությունը, ովքեր են մասնակցել, քրեական գործի որ նյութերն է փորձագետն օգտագործել, ինչպիսի իրեղեն ապացույցներ, նմուշներ և այլ օբյեկտներ են հետազոտվել, ինչպիսի հետազոտություններ են կատարվել, ինչպիսի մեթոդներ են կիրառվել, առաջադրված հարցերի հիմնավորված պատասխանները, գործի համար նշանակություն ունեցող այն հանգանաքները, որոնք պարզվել են փորձագետի նախաձեռնությամբ: Փորձագետի եզրակացությանը պետք է կցվեն հետազոտված իրեղեն ապացույցները, նմուշները և այլ նյութեր, ինչպես նաև փորձագետի հետևող ներկայացուցչին պարզաբանող լուսանկարները, սխեմաները: Եթե ներկայացված նյութերն անբավարար են կամ հարցի լուծումը դուրս է փորձագետի հատուկ գիտելիքների սահմաններից, փորձագետի եզրակացությունը պետք է բովանդակի առաջադրված բոլոր կամ որոշ հարցերին պատասխաննելու անհնարինության մասին հիմնափորում²³:

Նմուշներ ստանալու արձանագրությունում նշվում են այդ գործողությանը մասնակցած անձինք, նկարագրվում են նմուշներ ստանալու համար ծեռնարկված բոլոր գործողություններն այն հաջորդականությամբ, ինչպես որ դրանք կատարվել են, կիրառված գիտատեխնիկական մեթոդները և միջոցները, ինչպես նաև ստացված նմուշները: Ստացված նմուշները կցվում են արձանագրությանը²⁴:

Մեղադրական եզրակացությունը բաղկացած է նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերից: Նկարագրական-պատճառաբանական մասում քննիչը շարադրում է հանցագործության հանգամանքները, մեղադրյալին, ինչպես նաև տուժողին բնութագրող հանգամանքները, մեղադրյալի մեղավորությունը հաստատող ապացույցները, ի պաշտպանություն նրա բերվող փաստարկները և այդ փաստարկների ստուգման արդյունքում հավաքված ապացույցները: Եթե քրեական հետապնդումը հարուցվել է ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան, ապա այդ մասին պետք է նշվի մեղադրական եզրակացության նկարագրական - պատճառաբանական մասում: Եզրափակիչ մասում շարադրվում են մեղադրյալի մասին տեղեկությունները և առաջադրված մեղադրանքի ծևակերպումը՝ նշելով տվյալ հանցագործությունը նախատեսող քրեական օրենքի նորմերը: Քննիչն ստորագրում է մեղադրական եզրակացությունը՝ նշելով այն կազմելու ժամանակը և տեղը²⁵:

Մեղադրական եզրակացության հավելվածներ են համարվում մեղադրական եզրակացությանը կցվող՝ դատական նիստին կանչվելու ենթակա անձանց ցուցակը, ինչպես նաև իրեղեն ապացույցների և դրանց գտնվելու տեղի, քաղաքացիական հայցը և գույքի հնարավոր բռնագրավումն ապահովելու համար ծեռնարկված միջոցների, դատական ծախսերի, խափանման միջոցների մասին քննիչի տեղեկանքները: Ցուցակում գննիչը նշում է կանչման ենթակա անձանց գտնվելու տեղը և գործի այն էջերը, որոնք պարունակում են նրանց ցուցունքները կամ եզրակացությունները²⁶:

Այլ փաստաթուղթ է համարվում թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ծևով արված ցանկացած գրառում, որով կարող են հաստատվել քրեական գործի համար նշանակություն ունեցող տվյալները²⁷: Մասնավորապես դրանցից են՝ լուսանկարչական նեգատիվները և լուսանկարները, կինոժապավեմները, դիապոզիտիվները, հարցաքննության ձայնագրությունը, տեսաերկները, համակարգչային տեղեկատվության կրիչները, գծագրերը, պլանները, ծեփապատճենները, հետքերի դրոշները:

Փաստաթուղթը քրեական գործի նյութերին կցվում է վարույթն իրականացնող մարմնի կողմից և պահպում է գործի հետ՝ վերջինիս պահելու ամբողջ ժամանակամիջոցում: Այն դեպքում, երբ առգրավված և գործին կցված

22. Տես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդված:

23. Տես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 250-րդ հոդված:

24. Տես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 256-րդ հոդված:

25. Տես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 270-րդ հոդված:

26. Տես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 271-րդ հոդված:

27. Տես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդված:

փաստաթղթերն օրինական տիրապետողին անհրաժեշտ են ընթացիկ հաշվառման, հաշվետվության և այլ օրինաչափ նպատակների համար, նրան հնարավորություն է ընձեռվում ժամանակավոր օգտագործման համար ստանալ այդ փաստաթղթերը կամ դրանցից պատճեններ հանել: Դատարանի դատավճիռը կամ քրեական գործի վարույթը կարծելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումն օրինական ուժի մեջ մտնելու օրվանց վեց ամիս հետո գործում առկա փաստաթղթի բնօրինակները՝ դրանց օրինական տիրապետողների խնդրանքով, վերադարձվում են նրանց: Այս դեպքում գործում մնում է փաստաթղթի պատճենը, որի ճշտությունը հաստատում է քննիչը, դատախազը կամ դատարանը:

3.3. Քրեական գործերի նյութերին ծանոթանալը

? Ովեր և ի՞նչ չափով իրավունք ունեն ծանոթանալու քրեական գործի նյութերին:

- Քրեական գործի նյութերին, բացի քրեական վարույթն իրականացնող մարմնից (դատարանը, իսկ քրեական գործով մինչդատական վարույթում՝ հետաքննության մարմնից, քննիչից և դատախազից) ծանոթանալու իրավունք ունեն՝

1) Տուժող, կասկածյալը, մեղադրյալը, պաշտամնը, բաղաքացիական հայցվորը²⁸ և բաղաքացիական պատախանողը²⁹, ովեր իրավունք ունեն՝

- ծանոթանալ քննչական և այլ դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց նրանք մասնակցել են և դիտողություններ ներկայացնել արձանագրությունում գրառումների ճշտության և լրիվության կապակցությամբ, քննչական և այլ դատավարական գործողությանը մասնակցելու, դատարանի նիստին ներկա գտն-

28. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բաղաքացիական հայցվոր է ճանաչվում քրեական գործով վարույթի ընթացքում հայց ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի նկատմամբ բավարար իհմքեր կան ենթադրելու, որ նրան քրեական օրենսգրքով չքույսարդված արարքով պատճառվել է քրեական դատավարության կազմով հաստոցման ենթակա գույքային վճառ:

29. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բաղաքացիական պատախանող է ճանաչվում ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի վրա օրենքով, քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացված հայցի հիմնա վրա կարող է դրվել գույքային պատասխանատվություն քրեական օրենսգրքով չքույսարդված արարքով գույքային վճառ պատճառած մեղադրյալի գործողությունների համար:

Վելու դեպքում պահանջել նշված գործողության կամ դատարանի նիստի արձանագրության մեջ գրառումներ կատարել այն հանգամանքների մասին, որոնք նրանց կարծիքով, պետք է նշվեն,

- ծանոթանալ դատական նիստի արձանագրությանը և ներկայացնել դրա մասին իրենց դիտողությունները (բացի կասկածյալից),
- նախաբանության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանել և գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություններ (բացի կասկածյալից),
- իրենց խնդրանքով անվճար ստանալ քրեական գործը կարծելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումների պատճենները (բացի քաղաքացիական հայցվորից և պատասխանողից), մեղադրական եզրակացության կամ եզրափակիչ որոշման պատճենը, ինչպես նաև դատավճռի կամ դատարանի՝ այլ վերջնական որոշման պատճենը (բացի կասկածյալից):

2) **Կասկածյալը և մեղադրյալը**, ովեր ի լրումն 1-ին կետում նշվածի նաև իրավունք ունեն՝

- քրեական վարույթն իրականացնող մարմնի միջոցով ծանոթանալ փորձաքննությունների և նաև նագիտական ստուգումների նշանակման, իրենց նկատմամբ խափանման միջոց և դատավարական հարկադրանքի այլ միջոցներ կիրառելու մասին կայացված որոշումներին, իսկ իր խնդրանքով՝ նաև անվճար ստանալ այդ որոշումների պատճենները,
- ձերբակալվելուց կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումն իրեն հայտարարվելուց հետո քրեական հետապնդման մարմնից անմիջապես անվճար ստանալ ձերբակալելու կամ խափանման միջոց ընտրելու մասին քրեական հետապնդման մարմնի որոշման պատճենը, իսկ ձերբակալման արձանագրություն կազմելուց հետո՝ դրա պատճեննը:

3) **Ընթերականը**, ով իրավունք ունի ծանոթանալ համապատասխան քննչական գործողության արձանագրությանը:

4) **Թարգմանիչը**, մասնագետը, վկան, ովեր իրավունք ունեն ծանոթանալ իրենց մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրությանը, ինչպես նաև համապատասխան մասով՝ դատական նիստի արձանագրությանը:

- 5) **Փորձագետը**, ով իրավունք ունի քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ ծանոթանալ եզրակացություն տալու համար անհրաժեշտ նյութերին և գործի նյութերից դուրս գրել անհրաժեշտ տեղեկություններ, ծանոթանալ փորձաքննության առարկային վերաբերող նյութերին, դրանցից դուրս գրել անհրաժեշտ տեղեկություններ:

Ի՞նչ կարգով կարելի է ծանոթանալ քրեական գործի նյութերին:

- Սեղադրական եզրակացություն կազմելուց առաջ քրեական գործի նյութերին ծանոթացնելու կարգը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 265-րդ հոդվածում, ըստ որի մեղադրական եզրակացություն կազմելու համար հավաքված ապացույցները բավարար համարելով՝ քննիչն այդ մասին հաղորդում է մեղադրյալին, պաշտպանին, ինչպես նաև տուժողին, նրա ներկայացուցչին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին և որոշում է գործի նյութերի հետ նրանց ծանոթանալու ժամանակը և տեղը:

Տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին քննիչը ծանոթանալու համար գործը ներկայացնում է նրանց միջնորդության դեպքում, իսկ մեղադրյալին և պաշտպանին՝ անկախ միջնորդությունից: Եթե մեղադրյալի պաշտպանը կամ տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչը չի կարող ներկայանալ նշանակված ժամին, քննիչը ծանոթանալը հետաձգում է մինչև 5 օր ժամկետով: Տվյալ ժամկետում պաշտպանի կամ ներկայացուցիչի չներկայանալու դեպքում մեղադրյալին հետաքրորդություն է ընձեռվում իր համաձայնությամբ կամ նշանակմամբ ունենալու այլ պաշտպան, իսկ տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին՝ այլ ներկայացուցիչ:

Քրեական գործի նյութերին ծանոթանալու կարգը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 266-րդ հոդվածում, ըստ որի քննիչը ծանոթացնան համար գործի նյութերը ներկայացնում է համարակալված էջերով և յուրաքանչյուր հատորում պարունակվող փաստաթղթերի ցանկով՝ մեկ կամ մի քանի կարգած հատորների տեսքով: Պետք է ներկայացվեն նաև գործի հետ պահող իրեղեն ապացույցները և քննչական գործողությունների արձանագրություններին կցված հավելվածները: Եթե գործը բաղկացած է մի քանի հատորներից, բոլոր հատորները պետք է ներկայացվեն միաժամանակ: Դատավարության մասնակիցներին գործի հետ ծանոթացնելիս քննիչը, նրանց միջնորդությամբ, համապատասխան սարքավորումների կի-

րառմամբ վերաբերադրում է ձայնագրառությունը, կինո և տեսաֆիլմերը, արձանագրությունների հավելված տեսապատճենները, ներկայացնում է իրեղեն ապացույցները:

Մեղադրյալը և պաշտպանը գործին ծանոթանում են դատավարության մյուս մասնակիցներից ավելի ուշ: Նրանք իրավունք ունեն գործին ծանոթանալ միասին կամ առանձին: Նմանապես՝ ներկայացուցիչների հետ միասին կամ առանձին գործին կարող են ծանոթանալ նաև տուժողը, քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողը:

Գործի նյութերին ծանոթացնելու արձանագրությունում նշվում են ծանոթացնելու ժամկետը և տեղը, գործին ծանոթացնող անձի պաշտոնը, գործին ծանոթացող անձանց մասին և պաշտպանի, ինչպես նաև տուժողի, քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչների լիազորությունները վկայակոչող փաստաթղթերի մասին տեղեկությունները: Դատավարության յուրաքանչյուր մասնակից գործին ծանոթացնելու մասին կազմվում է առանձին արձանագրություն: Եթե պաշտպանը գործին ծանոթացել է իր պաշտպանյալի հետ միասին կամ ներկայացուցիչը գործի հետ ծանոթացել է ներկայացվող տուժողի, քաղաքացիական հայցվորի կազմական պատասխանողի հետ միասին, ապա գործի հետ պաշտպանի և պաշտպանյալի, ինչպես նաև ներկայացուցիչի և ներկայացվողի ծանոթանալու մասին կարող է կազմվել մեկ արձանագրություն: Արձանագրության մեջ նշվում են ծանոթացնան համար ներկայացված գործի հատորների և յուրաքանչյուր հատորում առկա էջերի թիվը, ինչպես նաև ներկայացված իրեղեն ապացույցները և քննչական գործողությունների արձանագրություններին կցված հավելվածները: Արձանագրության մեջ նշվում են գործի նյութերին ծանոթանալու յուրաքանչյուր օրը, սկսելու և պակատելու ժամանակը: Արձանագրության մեջ նշցվում են քրեական գործի նյութերին ծանոթանալուց հետո հարուցված բանավոր միջնորդությունները: Գրավոր միջնորդությունները կցվում են արձանագրությանը, որի մասին նշում է կատարվում արձանագրության մեջ³⁰:

Գործին ծանոթացող անձինք իրավունք ունեն գործում առկա փաստաթղթերից անել դուրսգրումներ և պատճենահանել դրանք, լուսանկարել իրեղեն ապացույցները:

Ինչպես կարող է լրագրողը մինչդատական վարույթի ընթացքում ծանոթանալ քրեական գործի նյութերին:

- Լրագրողը (լրատվական միջոցը) քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում չի կարող ծանոթանալ քրեական գործի նյութերին, եթե չի հանդիսանում քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կողմ:

Լրագրողը կարող է հանդես գալ հետևյալ «կարգավիճակներով»՝

- Յաղորդել հանցագործության մասին: Այդ դեպքում լրատվական միջոցին որպես հանցագործության մասին հաղորդում ներկայացրած սուբյեկտի, ուղարկվում է քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցելը մերժելու մասին որոշման պատճեն: Բացի այդ, լրատվական միջոցը կարող է վերադաս դատախազին բողոքարկել քրեական գործի հարուցելը մերժելու մասին որոշումը³¹:
- Լինել դատավարության մասնակից (տուժող, քաղաքացիական հայցվոր, նրանց ներկայացուցիչը, կասկածյալ, մեղադրյալ, նրանց ներկայացուցիչը, քաղաքացիական պատասխանող և նրա ներկայացուցիչը) կամ վկա, ընթերական, թարգմանչ, մասնագետ: Այդ դեպքերում լրագրողը քրեական գործի նյութերին կարող է ծանոթանալ համապատասխան անձի համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, որը հակիրծ ներկայացված է նաև սույն ձեռնարկի վերոգրյալ մասերում:
- Լինել քրեական գործի վարույթն իրականացնող մարմնում հավատարմագրված լրագրող: Այդ դեպքում գործում է համապատասխան մարմնում լրագրողների հավատարմագրման կարգը: Եթե հաշվի առնենք, որ ՀՀ պետական կառավարման մարմիններում լրագրողների հավատարմագրման օրինակելի կարգը սահմանված է ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 333-Ն որոշմամբ, ապա կարող ենք նշել, որ հավատարմագրված լինելու դեպքում պետական մարմինը
1) որևէ ձևով կամ որևէ եղանակով չի իրականացնում հավատարմագրված լրագրողի մասնագիտական գործունեության գրաբննություն,
- 2) հավատարմագրված բոլոր լրագրողների համար ապահովում է ոչ խորական պայմաններ,
- 3) լրագրողների համար նախատեսված տեղեկատվությունը հավատար-

մագրված բոլոր լրագրողներին տրամադրում է միաժամանակ,

4) հավատարմագրված բոլոր լրագրողներին հնարավորինս շուտ տեղեկացնում է պետական մարմնի այն միջոցառումների ժամանակի և անցկացման վայրի մասին, որոնք կազմակերպվում են լրագրողների համար կամ նախատեսված է լրագրողների մասնակցությունը միջոցառումներին:

Պավատարմագրված լրագրողն իրավունք ունի՝

- ստանալու լրատվական միջոցների համար նախատեսված տեղեկատվությունը,
- նախապես տեղեկացված լինելու պետական մարմնի՝ լրսարաննան ենթակա միջոցառումների անցկացման մասին և ծանոթանալու առկա տեղեկատու նյութերին,
- մասնակցելու պետական մարմնի՝ լրսարաննան ենթակա միջոցառումներին,
- հավատարմագրված այլ լրագրողների հետ համահավասար օգտվելու հավատարմագրված լրագրողների համար ստեղծված պայմաններից, 5) պետական մարմնում հավատարմագրված լինելու հանգամանքից անկախ՝ տեղեկատվության ազատության վերաբերյալ ՀՀ օրենսդրությանը սահմանված կարգով դիմելու և ստանալու իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը:

Պետական մարմնի պատասխանատուն լրագրողի մասնագիտական գործունեությանն օժանդակելու նպատակով, լրագրողի միջնորդությամբ, կազմակերպում է այցելություններ պետական մարմնի ստորաբաժնումներ և հանդիպումներ պետական մարմնի պաշտոնատար անձանց հետ:

Պետական մարմնի միջոցառումներին կարող են մասնակցել կամ ներկա գտնվել յուրաքանչյուր լրատվության միջոցը ներկայացնող մեկ լրագրող և մեկ լրսանկարիչ կամ տեսաձայնագրման մեկ օպերատոր, եթե պետական մարմնի պատասխանատուի հետ ձեռք չի բերված այլ պայմանավորվածություն և, եթե ավելի մեծ թվով լրագրողների, լրսանկարիչների ու օպերատորների մասնակցությունը չի սահմանափակվի հավատարմագրված այլ լրագրողների մասնակցության հնարավորությունը:

Պետական մարմնի միջոցառումներից դուրս լրագրողի այցելությունը պետական մարմին համաձայնեցվում է պետական մարմնի պատասխանատուի հետ: Պետական մարմնի պատասխանատուի՝ պետական մարմնի տարածքում հավատարմագրված լրագրողի աշխատանքի կազմակերպմանն

31. Տես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ և 185-րդ հոդվածները:

ուղղված ցուցումները պարտադիր են հավատարմագրված լրագրողի համար:

- Լինել քրեական գործի վարույթն իրականացնող մարմնում չհավատարմագրված լրագրող, որը ցանկանում է ծանոթանալ քրեական գործի նյութերին: Այդ դեպքում լրագրողը մինչդատական վարույթում քրեական գործում առկա որևէ տեղեկություն կարող է ստանալ կամ իրապարակել միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ:

3.4 Քրեական գործերով տեղեկատվության սահմանափակումները: Նախաքննության գաղտնիքը

 **Որո՞նք են քրեական գործի վերաբերյալ տեղեկատվության սահմանափակումները:**

- Քրեական գործի վերաբերյալ տեղեկություններ ստանալիս (տրամադրելիս) գործում են հետևյալ սահմանափակումներ՝

- 1) **անձնական և ընտանեկան լյանքի անձեռնմխելիությունը**, որի առնչությամբ գործում են հետևյալ կանոնները՝
 - Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական և ընտանեկան լյանքն անօրինական միջամտությունից, իր պատիվը և բարի համբավը ոտնձգությունից պաշտպանելու իրավունք:
 - Դատավարական գործողություններ կատարելիս առանց անհրաժեշտության չպետք է հավաքեն, պահպեն, օգտագործվեն և տարածվեն անձի անձնական կամ ընտանեկան լյանքին վերաբերող տեղեկություններ, ինչպես նաև անձնական բնույթի այլ տվյալներ: Դատարանի, ինչպես նաև հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի պահանջով քննչական և դատական գործողությունների մասնակիցները պարտավոր են չհրապարակել նշված տեղեկությունները, որի համար նրանցից վերցվում է ստորագրություն:
 - Անձնական կամ ընտանեկան լյանքի ինտիմ կողմերին վերաբերող ապացույցները քրեական դատավարությանը մասնակցող այն անձանց պահանջով, որոնց սպառնում է անձնական կամ ընտանեկան գաղտնիքի իրապարակումը, հետազոտվում են դռնփակ դատական նիստում:
 - Անձնական կամ ընտանեկան լյանքի անձեռնմխելիության խախտում առաջ է բերում օրենքով սահմանված պատասխանատվություն, իսկ դրա

հետևանքով անձին պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ օրենքով սահմանված կարգով³²:

- 2) **պետական գաղտնիքի պահպանումը**, որի առնչությամբ գործում են հետևյալ կանոններ՝
 - Քրեական դատավարության ընթացքում ձեռնարկվում են պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների պահպանման՝ օրենքով նախատեսված միջոցներ:
 - Անձինք, որոնց քրեական հետապնդման մարմինն առաջարկում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթներին համապատասխան հաղորդել կամ ներկայացնել պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ, չեն կարող, վկայակոչելով պետական գաղտնիքի պահպանման անհրաժեշտությունը, իրաժարվել այդ պահանջը կատարելուց, սակայն իրավունք ունեն դատախազից, քննիչից, հետաքննության մարմնից նախապես ստանալ քրեական հետապնդման մարմնի կողմից նշված տեղեկությունների ստացման անհրաժեշտությունը հաստատող, հարցաքննության կամ այլ համապատասխան քննչական գործողության արձանագրության մեջ արտացոլման ենթակա պարզաբանում:
 - Պետական գաղտնիք պարունակող, իրեն վստահված տեղեկությունների վերաբերյալ ցուցմունքներ տվող պետական ծառայողն այդ մասին գրավոր հաղորդում է համապատասխան պետական մարմնի դեկավարին, եթե դա նրան ուղղակիորեն չի արգելում վարույթն իրականացնող մարմնը:
 - Պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ կապված քրեական գործերով վարույթը հանձնարարվում է այդպիսի տեղեկությունները չիրապարակելու մասին ստորագրություն տված դատավորներին, դատախազներին, քննիչներին, հետաքննության մարմնի աշխատակիցներին:
 - Պաշտպանները և մյուս ներկայացուցիչները, ինչպես նաև այլ անձինք, որոնց ծանոթացման համար ներկայացվում կամ այլ կերպ հաղորդվում են պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ, պետք է նախապես ստորագրություն տան այդպիսի տվյալների չիրապարակման մասին: Ստորագրություն տալուց հրաժարվելու դեպքում պաշտպանը և մյուս ներկայացուցիչը, բացի օրինական ներկայացուցչից, գրկում են քրեական դատավարությանը մասնակցելու իրավունքից, իսկ մյուս անձինք պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ չեն ստա-

32. Տես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածը:

նում: Զիրապարակելու մասին դատավարության մասնակցի տված պարտավորությունը նրան չի խոչընդոտում միջնորդելու պետական գաղտնիք պարունակող տեղեկությունները հետազոտել դռնփակ դատական նիստում³³:

- 3) **Ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք ստացումը և պահպանումը**, որի առնչությամբ գործում են հետևյալ կանոնները՝
- Քրեական դատավարության ընթացքում ձեռնարկվում են ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների պահպանման՝ օրենքով նախատեսված միջոցներ:
 - Դատավարական գործողություններ կատարելիս առանց անհրաժեշտության չպետք է հավաքվեն, պահվեն, օգտագործվեն և տարածվեն ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկություններ: Դատարանի, ինչպես նաև հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի պահանջով քննչական և դատական գործողությունների մասնակիցները պարտավոր են չիրապարակել նշված տեղեկությունները, որի համար նրանցից վերցվում է ստորագրություն:
 - Անձինք, որոնց քրեական վարույթն իրականացնող մարմինն առաջարկում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթներին համապատասխան հաղորդել կամ ներկայացնել օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկություններ, չեն կարող վկայակոչելով ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիքի պահպանման անհրաժեշտությունը, հրաժարվել այդ պահանջը կատարելուց, սակայն իրավունք ունեն դատարանից, դատախազից, քննիչից, հետաքննության մարմնից նախապես ստանալ նրանց կողմից նշված տեղեկություններ ստանալու անհրաժեշտությունը հաստատող, համապատասխան քննչական կամ դատավարական գործողության արձանագրության մեջ արտացոլման ենթակա պարզաբանում:
 - Քրեական հետապնդում իրականացնող մարմինները նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են ստանալ դատարանի որոշման հիման վրա:
 - Քրեական հետապնդում իրականացնող մարմինները քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահ-

33. Տես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածը:

մանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկությունները կարող են ստանալ խուզարկության կամ առգրավման վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա:

- Քրեական հետապնդում իրականացնող մարմինները վարկային բյուրոյից վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն կարող են ստանալ միայն դատարանի որոշման հիման վրա:
- Ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող, իրեն վստահված տեղեկությունների վերաբերյալ ցուցմունքներ տվող պետական ծառայողը և անկախ սեփականության ձևից՝ ձեռնարկության, հիմնարկի կամ կազմակերպության աշխատողն այդ մասին գրավոր հաղորդում է համապատասխան դեկավարին, եթե դա նրան ուղղակիորեն չի արգելում վարույթն իրականացնող մարմինը:
- Ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ պատցույցներն այն անձանց պահանջով, որոնց սպառնում է նշված տեղեկությունների հրապարակում, կարող են հետազոտվել դռնփակ դատական նիստում:

Պետք է նշել նաև, որ պետական կամ ծառայողական գաղտնիքի հարցը լուծելիս պետք է հաշվի առնել նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի մարտի 6-ի UՂՈ-1010 դրույթը, որով «Պետական ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասի «Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ներքանաց չեն» դրույթը այնքանով, որքանով չի վերաբերվում գաղտնագրման ենթակա կոնկրետ տեղեկության, ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ և 43-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

- 4) **պաշտպանվող անձի³⁵ ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունը**, որն իրականացվում է հետևյալ միջոցներով՝
- Քրեական գործի նյութերում և այլ փաստաթղթերում կամ տեղեկություններ պարունակող կրիչներում, ինչպես նաև քննչական գործողություններում հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք:

34. Տես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածը:

35. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի համաձայն՝ քրեական դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու եւ դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք:

րի կամ դատական նիստերի արձանագրություններում անձի մասին տեղեկությունների սահմանափակումով՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ քրեական գործում առկա արձանագրային տվյալներում պաշտպանվող անձի ազգանունը, անունը, հայրանունը կեղծանուններով փոխարինելու միջոցով:

- Տեղեկությունները սահմանափակելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը և դրան առնչվող նյութերն առանձնացվում են քրեական գործի մյուս նյութերից և պահպում վարույթն իրականացնող մարմնի մոտ:
- Հիմնական վարույթից առանձնացված որոշմանը և դրան առնչվող նյութերին ծանոթանալը մատչելի է միայն դատարանին և քրեական հետապնդումն իրականացնող մարմնին, իսկ դատավարության մյուս մասնակիցները դրան կարող են ծանոթանալ միայն քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ, եթե դա անհրաժեշտ է կասկածյալի կամ մեղադրյալի պաշտպանությունն իրականացնելու կամ քրեական գործի քննության համար էական նշանակություն ունեցող որևէ հանգանք պարզելու համար:
- Պաշտպանվող անձի մասին տեղեկություններ տրամադրելու վրա ժամանակավոր արգելը³⁶:

Ի՞նչ է նախաքննության գաղտնիքը:

- Քրեական գործի վերաբերյալ տեղեկություններ ստանալիս գործող սահմանափակումներից առանձնահատուկ ուշադրության է արժանի նախաքննության գաղտնիքը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածի համաձայն՝ նախնական քննության տվյալները ենթակա են իրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ³⁷: Անհրաժեշտ դեպքերում քննիչը, հետաքննության մարմինը վկային, տուժողին, քաղաքացիական հայցվորին և քաղաքացիական պատասխանողին, նրանց ներկայացուցիչներին, մասնագետներին, փորձագետներին, քարզանիչներին, ընթերականներին, պաշտպաններին և գործին մասնակցող այլ անձանց գրավոր նախագգուշացնում են՝ նախնական քննության տվյալներն

36. Տես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98.3-րդ հոդվածը:

37. Պետք է նշել, որ ՀՀ արդարադատության խորհուրդը Սահմանադրությամբ սահմանված իր լիազորությունների իրականացման համար նախաքննության գաղտնիք պարունակող տեղեկությունները, նյութեր, տեղեկանքներ և այլ փաստաթղթեր ստանալու իրավունք ունի (տես՝ ՀՀ դատական օրենսգրքի 110-րդ հոդված):

առանց թույլտվության չիրապարակելու պարտականության մասին:

Նախաքննության գաղտնիքը կամ նախնական քննության տվյալները իրապարակելու արգելքը պայմանավորված է մինչդատական վարույթի առանձնահատկություններով, ընդ որում՝ հանցագործություն կատարած անձանց հայտնաբերելու և որոնելու, ինչպես նաև նրանց հանցակիցների և քրեական գործի արյունքներով շահագրգռված այլ անձանց կողմից գործով պացույցների ոչնչացումը կանխելու անհրաժեշտությամբ: Նախաքննության տվյալները ժամանակից շուտ և անվերահսկելի հրապարակելը կարող է վնաս պատճառել ոչ միայն քրեական գործի հանգամանքների լրիվ և օրեեկտիվ հետազոտմանը, այլև՝ տուժողի, մեղադրյալի կամ դատավարության այլ մասնակիցների շահերին: Քրեական վարույթն իրականացնող մարմնը (դատարանը, իսկ քրեական գործի մինչդատական վարույթում՝ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը) ելնելով քրեական գործի կոնկրետ հանգամանքներից, ինքն է որոշում նախաքննության տվյալների այն չափում, որը կարող է հրապարակվել: Բացի այդ, քրեական վարույթն իրականացնող մարմնը պարտավոր է առաջնորդվել անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության ապահովման, պետական գաղտնիքի պահպանումը, ծառայողական և առևտության գաղտնիքի ստացման և պահպանման, ինչպես նաև պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանության առնչությամբ վերը նշված կանոններով:

ՀՀ սահմանադրական դատարանն անդրադառնալով մինչև նախաքննության ավարտը՝ միայն վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ իրապարակման ենթակա նախնական քննության տվյալներին, «անհրաժեշտ է համարում ընդգծել, որ վարույթն իրականացնող մարմնի՝ շահագրգիռ անձին քրեական գործի նյութերից այս կամ այն փաստաթղթի տրամադրումը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված, ինչպես դա նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածով: Սկզբունքային նոտեցումը պետք է լինի այն, որ նախնական քննության տվյալների հրապարակման թույլտվություն տալու՝ վարույթն իրականացնող հրավասու մարմնի հայեցողությունը չպետք է լինի բացարձակ: Այդ կապակցությամբ կայացված գործումը պետք է հետապնդի նախաքննության շահերի իրական պաշտպանության նպատակ:

Այս առնչությամբ հատկանշական է, որ եվրոպական մի շարք երկրների (Եստոնիա, Սերբիա և այլն) քրեական դատավարության օրենսգրքերը հստակ սահմանում են այն հիմքերը, որոնց առկայության դեպքում չի թույլատրվում քրեական գործի նյութի հրապարակումը:

Մասնավորապես, դրանք առնչվում են հասարակական կարգի պաշտպա-

նությանը, հանցագործության բացահայտմանը խոչընդոտելուն, քրեական դատավարությանը վնասաելուն և հանցանքի կատարմանը նպաստելուն, առևտորյան գաղտնիքին և իրավաբանական անձի գործունեությանը վնաս պատճառելուն, ընտանեկան կամ անձնական կյանքի անձեռնմխելությունը խախտելուն կամ անձի պատիվը ոտնահարելուն, անշափահասի շահերին վնաս պատճառելուն և այլն: Այս ուղղությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսդրության զարգացումը լրացնուիչ երաշխիքներ կստեղծի տուժողի շահերի պաշտպանության և նախաքննության նկատմամբ վստահության ամրապնդման գործում»³⁸:

Ո՞ր տեղեկություններն են որպես կանոն համարվում նախաքննության գաղտնիք:

- Զնայած «նախաքննություն տվյալներ» հասկացությունն ընդգրկում է քրեական գործով ողջ տեղեկատվությունը, ընդ որում՝ այն տեղեկությունները, որոնց տրամադրումը ոչ մի դեպքում չի կարող սահմանափակվել, իսկ նախաքննության գաղտնիք կազմող տեղեկությունների ցանկն օրենսդրությանը սահմանված չէ, այդուամենայնիվ կարելի է նշել այդպիսին հանդիսացող հետևյալ տեղեկությունները՝
 - Քննչական վարկածների, քննչական գործողությունների տակտիկայի, քրեական դատավարությանը նաև ակտերի անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը.
 - Դատավարության մասնակիցների անունները, ազգանունները, բնակության վայրերը և նրանց ինքնությունը նույնականացնել թույլ տվող այլ տվյալները.
 - Քննիչների և օպերատիվ ստորաբաժանումների համագործակցության վերաբերյալ տվյալները, այդ թվում՝ քննիչի կողմից հետքնության մարմնին տրվող գրավոր հանձնարարականները (ցուցումները).
 - Քրեական գործով ապացույցները, ինչպես նաև ապացուցողական բազայի վերլուծության վերաբերյալ տեղեկությունները:

Քրեական գործի նյութերից ո՞ր տեղեկությունները չեն կարող համարվել նախաքննության գաղտնիք:

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ուսումնասիրության արդյունքում կարելի է նշել նաև հետևյալ տեղեկությունները, որոնք որպես կանոն

չեն կարող դասվել նախաքննության գաղտնիք կազմող տվյալների շարքում՝

- Քրեական գործ հարուցելու փաստը, ինչպես նաև քրեական գործ հարուցելու մասին որոշման բովանդակությունը (մասնավորապես այդ որոշման մեջ պարտադիր նշվող հետևյալ տվյալները՝ քրեական գործ հարուցելու արիթմունը ու իմբքը, քրեական օրենքի այն հոդվածը, որի հատկանիշներով հարուցվում է գործը, հարուցելուց հետո գործի հետագա ընթացքը: Պետք է նշել նաև, որ քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենն ուղարկվում է հանցագործության նախաքննության նկատմամբ վստահության ամրապնդման գործում»³⁸:
- Դատավարական հարկադրամի միջոցներ (ձերբակալում, խափանման միջոցի կիրառում, պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը, բերնան ենթարկելու) կիրառելու մասին տեղեկությունները:
- Մեղադրանք առաջադրելու վերաբերյալ տեղեկությունները:
- Նախաքննությունն ավարտվելու և մեղադրական եզրակացություն կազմելու վերաբերյալ տեղեկությունները:
- Քրեական գործի քննությունը կասեցնելու, վերսկսելու կամ կարծելու վերաբերյալ տեղեկությունները:
- Քրեական վարույթի ընթացքում պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից անձանց իրավունքների և օրինական շահերի խախտման փաստերի վերաբերյալ տեղեկությունները:

Նախաքննության տվյալների գաղտնիության ապահովման քրեահրավական միջոցները սահմանված են ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածում, ըստ որի՝ առանց դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության՝ նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկից չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:

38. Տես՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թ.-ի հունվարի 24-ի ՍՊԸ-1008 որոշման 7-րդ մաս:

ՅԱՎԵԼՎԱԾ

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի և «Դատախազության մասին» ՀՅ օրենքի համապատասխան դրույթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՅ դատախազությունը տնօրինում է մինչդատական վարույթում իր լիազորությունների իրականացմանն առնչվող, մասնավորապես հետևյալ տեղեկությունները՝

- քրեական հետապնդում հարուցելու մասին, ինչպես նաև քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին որոշումները,
- քրեական գործ հարուցելու, քրեական գործի հարուցումը մերժելու մասին, քրեական գործի վարույթը կատեցնելու, վերսկսելու, կարծելու և քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ հետաքննիչի և քննիչի որոշումների օրինականությունը ստուգելու մասին
- քրեական գործը հետապնդության մարմնից վերցնելու և նախաքննության մարմնին հանձնելու, քրեական գործը նախաքննության մի մարմնից նախաքննության մեկ այլ մարմնին հանձնել մասին որոշումները,
- հետաքննության մարմնին և քննիչին տրված գրավոր ցուցումները և հանձնարարականները (այդ թվում՝ քրեական գործ հարուցելու հաճար նյութեր նախապատրաստելու, անհետաձգելի քննչական գործողություններ կատարելու, հետաքննության և նախաքննության նկատմամբ դատավարական դեկավարում իրականացնելիս),
- քրեական դատավարության մասնակցող, ինչպես նաև այլ անձանց դիմումների, հայտարարությունների, միջնորդությունների և բողոքների լուծման արդյունքում կայացրած որոշումները (դիմումների պատասխանները),
- հետաքննության մարմնի աշխատակցին, քննիչին տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացնելու վերաբերյալ որոշումները,
- անձեռնմխելիությունից օգտվող անձանց կալանավորման հարցը լուծելու և քրեական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունները, ինչպես նաև համապատասխան մարմններ դիմելու վերաբերյալ այլ փաստաթղթերը,
- լրացուցիչ քննություն կատարելու համար պարտադիր ցուցումներով քրեական գործերը քննիչին վերադարձնելու վերաբերյալ որոշումները,
- անձին ձերբակալելու, նրա նկատմամբ խափանման կամ դատավարա-

կան հարկադրանքի այլ միջոցներ կիրառելու, հարցաքննելու, ինչպես նաև նրան որպես մեղադրյալ ներգրավելու և մեղադրանք առաջարել վերաբերյալ որոշումները,

- մինչդատական վարույթի ընթացքում դատարան ներկայացրած միջնորդությունները (այդ թվում՝ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և նրան կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու, նանակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բնակարանի խուզարկության),
- նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակումները վերացնելու վերաբերյալ որոշումները,
- մեղադրյալների նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու, քրեական գործով վարույթը կարծելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշումները,
- մեղադրական եղրակացությունը հաստատելու, իսկ այն անձանց նկատմամբ քրեական գործերով, որոնք քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարել են անմեղսունակ վիճակում կամ անմեղսունակ են դարձել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարելուց հետո՝ եղրափակիչ որոշումները,
- ըստ էության քննելու համար քրեական գործերը դատարան ուղարկելու մասին որոշումները:

ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հետաքննության մարմինները տնօրինում են իրենց լիազորությունների իրականացմանն առնչվող մասնավորապես հետևյալ տեղեկությունները՝

- հանցագործությունների մասին հաղորդումները,
- քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական գործը կարծելու մասին որոշումները,
- անձանց ձերբակալելու կամ ազատ արձակելու, ինպես նաև բերման ենթարկելու վերաբերյալ որոշումները,
- ձերբակալվելուց հետո անմիջապես անձին՝ իր իրավունքների մասին հանձնված գրավոր ծանուցումները և պարզաբանումները,
- անձին նկատմամբ խափանման միջոց (ստորագրություն՝ չիեռանալու մասին, անձնական երաշխավորություն, կազմակերպության երաշխավորություն, հսկողության հանձնելը, հրամանատարության հսկողության

- հանձնելը) կիրառելու, փոխելու և վերացնելու մասին որոշումները,
- դատավարական գործողությունների արձանագրությունները,
 - հետաքննության մարմնին հասցեագրված դիմումները, հայտարարությունները, միջնորդությունները և բողոքները և դրանց քննության արդյունքում կայացված որոշումները (դիմումների պատասխանները),
 - հանցագործությունները և դրանք կատարող անձանց բացահայտելու, հանցագործությունը կախելու և խափանելու նպատակով ձեռնարկված օպերատիվ-հետախուզական և քրեադատավարական միջոցառումների վերաբերյալ արձանագրված տեղեկությունները,
 - քաղաքացիական հայցվոր, ինչպես նաև քաղաքացիական պատասխանող ճանաչելու մասին որոշումները,
 - հետաքննությունն ավարտվելու և քրեական գործերը քննիչին ուղարկելու վերաբերյալ որոշումները:
- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախաքննության մարմնները տնօրինում են իրենց լիազորությունների իրականացմանն առնչվող, նաև պարագայի հետևյալ տեղեկությունները՝
- քրեական գործ հարուցելու, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումները,
 - քրեական գործի վարույթը կասեցնելու, վերսկսելու, կարծելու և քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշումները,
 - քաղաքացիական հայցվոր, ինչպես նաև քաղաքացիական պատասխանող ճանաչելու մասին որոշումները,
 - անձին ձերբակալելու, նրա նկատմամբ խափանման կամ դատավարական հարկադրանքի այլ միջոցների կիրառելու, հարցաքննելու, ինչպես նրան որպես մեղադրյալ ներգրավել և մեղադրանք առաջարել վերաբերյալ որոշումները ,
 - ձերբակալվելուց հետո անմիջապես անձին՝ իր իրավունքների մասին հանձնված գրավոր ծանուցումները և պարզաբանումները,
 - ձերբակալվածին ազատ արձակելու մասին որոշումները,
 - հետաքննության մարմնին տրված գրավոր հանձնարարությունները (այդ թվում՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման մասի, ձերբակալման, բերման ենթարկելու, կալանավորման, այլ դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ որոշումները իրագործելու, առանձին քննչական գործողությունների կատարումը),

- դատավարական գործողությունների արձանագրությունները,
- անձանց որպես մեղադրյալ ներգրավելու վերաբերյալ որոշումները,
- քրեական դատավարությանը մասնակցող անձանց, ինչպես նաև այլ անձանց դիմումները, հայտարարությունները, միջնորդությունները, բողոքները և դրանց քննության արդյունքում կայացրած որոշումները (դիմումների պատասխանները),
- խափանման միջոցներ ընտրելու, փոխելու, վերացնելու և դատավարական հարկադրանքի այլ միջոցներ կիրառելու մասին (բացառությամբ կալանքի) որոշումները,
- կալանքի տակ պահիվող մեղադրյալներին ազատելու մասին որոշումները,
- մեղադրյալների նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և նրանց կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բնակարանի խուզարկության վերաբերյալ դատարանին ուղղված միջնորդությունները,
- նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա դրված կալանքը, հեռախոսային խոսակցությունները լսելը վերացնելու մասին որոշումները,
- բնակարանը զննելու, այնտեղ դատավարական այլ գործողություններ կատարելու, ինչպես նաև բնակարանը զբաղեցնող անձանց կամքին հակառակ տեխնիկական միջոցների գործադրմանը բնակարան մուտք գործելու վերաբերյալ որոշումները,
- անձանց բնակային ավանդների և այլ գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ որոշումները,
- դատախազի հաստատմանը ներկայացված մեղադրական եզրակացությունները, իսկ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքն անմեղաստանակ վիճակում կատարած կամ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարելուց հետո անմեղստակ դարձած անձանց նկատմամբ քրեական գործերով՝ եզրափակիչ որոշումները: